

ՀԱՐԻՐԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՑԱՐԳ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԱԾ ՋԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ



Վարչապետ Սաատ Յարիրի երեկ յետմիջօրէին այցելեց հանրապետութեան նախագահ զօր. Միշել Անլի, որուն հետ փոխըմբռնումի մթնոլորտի մը մէջ քննարկեց կառավարութեան կազմութեան իմաստով ցարդ արձանագրուած զարգացումները:

Հանդիպումէն ետք վարչապետ Յարիրի մեկնեցաւ առանց յայտարարութիւն կատարելու:

Նշենք, որ նախագահ Անլի երեկ ընդունեց Նաեւ Լիբանանեան ժողովրդավարական կուսակցութեան նախագահ, երեսփոխան Թալալ Արսլանը՝ ընկերակցութեամբ ընկերային հարցերու եւ զբօսաշրջութեան նախարարի պաշտօնակատար Ռամզի Մշարրաֆիի եւ նախկին նախարար Սալեհ Ղարիպի:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան կառավարութեան կազմութեան վերաբերող մանրամասնութիւններ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՔԻՊԻՉԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՐՅԱԽԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՄԸ



ՀՀԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի «Շաղ-գոյեան» կեդրոնին մէջ ընդունեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի ներկայացուցիչ Իան Քիւպիչը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները եւ երկիրը իր ներկայ տազնապէս արագօրէն դուրս բերելու հրամայականը:

Այս ծիրէն մէջ, Բագրատունի Քիւպիչին ներկայացուց ԴՀ Դաշնակցութեան եւ Հայկական երեսփոխանական պլոքին կեցուածքները եւ պատասխանատուութիւն վերցնելու պատրաստակամութիւնը:

Յատուկ կարեւորութեամբ քննարկուեցաւ Նաւահանգիստի պայթումին իբրեւ հետեւանց Պէյրութի եւ Պուրժ Զամուտի բնակիչներուն կրած վնասներուն հասնելու անհրաժեշտութիւնը:

Շաբ.ը՝ էջ 4

ԱՐՁԱԳԱՆԳԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԱՄԱԿԻՆ՝

ՊԱՀՐԷՅՆ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ՄԻԱԽՈՐԵԼՈՒ ՀՐԱԳԱԴԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋԱՆՔԵՐԸ

Պահրէյնի թագաւոր շէյխ Համատ պըն Իսա Ալ Խալիֆան արձագանգած է Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեանի կողմէ իրեն յղուած Նամակին: Նախագահ Սարգսեան 30 սեպտեմբերին Նամակներ յղած էր Պահրէյնի թագաւորութեան թագաւորին եւ արաբական շարք մը երկիրներու ղեկավարներու՝ տեղեկացնելով Հայաստանի հետ սահմանին եւ Լեռնային Ղարաբաղի հետ շփման գիծին մէջ Ազրայեճանի կողմէ սանձազերծուած պատերազմական գործողութիւններուն մասին, եւ Նշած միջազգային հարթակներու մէջ անոնց ունեցած կապերու եւ հեղինակութեան օգտագործման կարեւորութիւնը՝ դադրեցնելու արինահեղութիւնն ու մարդկային տառապանքները:

Շաբ.ը՝ էջ 3

ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ, ԱԶՐՊԷՅՃԱՆ ԿՈՐՄՆՑՈՒՑԱԾ Է ԻՐ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՒ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱԽԵԼՈՒԹԻՒՆԸ

Երեկ՝ երեքշաբթի, 27 հոկտեմբերին տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին, Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան յայտնեց, որ Արցախի դէմ Ազրայեճանի սանձազերծած պատերազմին ընթացքին ազրայեճանական բանակը, անոր աջակցող թրքական եւ ահաբեկչական ուժերը կորսնցուցած են իրենց հսկայական քանակական եւ թեքնիք առաւելութիւնը:

«Պատերազմը իր բնոյթը որոշակիօրէն փոխած է: Մեր զինուած ուժերը կը վարեն բարդ մարտեր լեռներու վրայ, անտառներու եւ կիրճերու մէջ: Այսօր ոչնչացուած են քանի մը հետախուզական ներթափանցող խումբեր, քանի մը հատը փախուստի մատուցած՝ ձգելով որոշակի զինուորական մեքենաներ, բայց այս պատերազմը իր բնոյթով որոշակի բարդութիւն ունի: Թշնամին այլեւս կորսնցուցած է իր ահռելի քանակական առաւելութիւնը, իր արիեստագիտական առաւելութիւնը», յայտնեց Արծրուն Յովհաննիսեան:

Արծրուն Յովհաննիսեան նշեց, որ 27 հոկտեմբերի առաւօտեան ազրայեճանական զինուած ուժերը կրկին շարունակած են յարձակողական գործողութիւններ իրականացնել տարբեր ուղղութիւններով, միաժամանակ քանի մը բնակավայրերու խաղաղ բնակիչներուն նկատմամբ կիրարկուած է հրետանի:

Անոր համաձայն, զիւղերուն ուղղութեամբ, իբրեւ կանոն, կը մօտենան ազրայեճանական հետախուզական փոքր խումբեր, որոնք կը բերեն թեթեւագէտ սպառազինութիւն:

ԹՐԲԱԿԱՆ ԼԻԲԱՆ ԱՐԺԵԶՐԿԱՆ ՆՈՐ ՄՐՅԱՆԻՇ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

Թրքական լիբան, 26 հոկտեմբերին ամերիկեան տոլարի դիմաց արժեզրկման նոր մրցանիշէ մը ետք (8,0006 լիբա մէկ տոլարին դիմաց) յաջորդ օրը՝ 27 հոկտեմբերին, նոր վայրէջք մը արձանագրած է՝ 8,16 տոլար:

Թրքական դրամանիշին գինը 2020-ի ընթացքին նուազած է 36 առ հարիւրով, որուն պատճառներն են Թուրքիոյ մէջ «Քորոնա» ժահրի տարածումը, Թուրքիոյ ռազմական ծախսերը եւ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի կողմէ երկրին ներգրաւումը Սուրիոյ, Լիպիոյ եւ Լեռնային Ղարաբաղի տազնապէսներուն մէջ, յարաբերութիւններու սրումը Յունաստանի եւ Ֆրանսայի հետ, ինչպէս նաեւ ներդրողներու սպասումները 3 Նոյեմբերին Սիացեալ Նահանգներու մէջ տեղի ունենալիք նախագահական ընտրութիւններէն:



բեր, որոնք կը բերեն թեթեւագէտ սպառազինութիւն:

Հայկական միասնական տեղեկատուական կեդրոնը օրուան ընթացքին յայտնեց, որ ռմբակոծւած են Արցախի Ասկերանի շրջանի Սարուշէն եւ Խաչմաչ գիւղերը, ինչպէս նաեւ Մարտունիի շրջանի Ննգի գիւղի բնակելի հատուածները, ուր ապաստանած էին տարբեր շրջաններէ ժամանակաւորապէս տեղահանուած քաղաքացիներ: Արձանագրուած են վիրաւորներ:

Շաբ.ը՝ էջ 3

ՉԱՐԻՖ. «ԻՐԱՆԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ՄՆԱՅՈՒՆ ԼՈՒԾՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ ՄՇԱԿԱԾ Է»

Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամեժ Ժաւատ Չարիֆ խորհրդարանի ազգային անվտանգութեան եւ արտաքին քաղաքականութեան յանձնախումբի նիստին մասնակցած է Լեռնային Ղարաբաղի շուրջ զարգացումներուն նուիրուած քննարկումին:


Շաբ.ը՝ էջ 2



ՓԱՆՈՐ. «ՓՈՄՓԵՐՈՆ ՊԷՏՔ Է ՊՆԴԷ, ՈՐ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ՀԱՐՅՈՎ ԿԻՐԱԿՈՒԻ ՈՌՅԱՒԵՆԿԵԼԻ ՀԱՄԱՋԱՅՆԱԳԻՐԸ»

Միացեալ Նահանգներու ընկերեսի Ներկայացուցիչներու տան անդամ Ֆրէնք Փալոն յայտարարած է, որ արտաքին գործոց նախարար Մայք Փոմպէոն պէտք է պարտադրէ Ռոյս-Էնկելի համաձայնագիրի կիրարկումը:

Շաբ.ը՝ էջ 2



ԻՐԱՆԻ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ. «ԻՐԱՆԸ ԽՍՏԱԳՈՅՆՍ ՊԻՏԻ ՊԱՏԺԷ ՀԱՒԱՏԱԳՐԺՈՂԱԿԱՆ ԱՀԱԲԵԿԻՉՆԵՐԸ ԻՐ ՍԱՀՄԱՆԵՐՈՒՆ ՄՕՏ»

Իրանը խստագոյնս պիտի պատժէ հաստադրժողական ահաբեկիչները իր սահմաններուն մօտ: Ըստ իրանեան լրատուամիջոցներու, այդ մասին յայտարարած է Իրանի բանակի հրամանատար, հազարապետ-գորավար Սայիտ Աղոյլաիմ Մուսաուին հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումներ կատարած այցելութեան եւ երկրի հիւսիս-արեւմուտքին մէջ հակաօդային պաշտպանութեան պատրաստութեան վիճակը ուսումնասիրելու ընթացքին:

Ան շեշտած է մարդոց, յատկապէս սահմանամերձ շրջաններու բնակիչներու անվտանգութեան ապահովման անհրաժեշտութիւնը: «Հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանում-



ները զօրացած են երկրի հիւսիս-արեւմուտքին մէջ եւ անհրաժեշտութեան պարագային պիտի աւելցուին», ըսած է ան՝ աւելցնելով, որ մարդոց հանգըստութիւնը իրենց համար առանձնապատուկ նշանակութիւն ունի:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԿԱՐԵՒՈՐ ՔԱՅԼ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԱՅՍ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ



Ամէն օր կը խախտուին մարդու իրաւունքները, կը խախտուի հրադադարի մասին ձեռք բերուած համաձայնութիւնը: Ասիկա արձանագրած են Ֆրանսայէն հասած երեսփոխանները, որոնք Երեւանի մէջ հանդիպում ունեցած են ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի հետ:

Անոնք ստեղծուած իրավիճակէն ելքը կը տեսնեն Արցախի անկախութեան ճանաչումը, որ ըստ անոնց, թոյլ կու տայ յստակ բանակցութիւններ սկսելու եւ կառուցելու Արցախի ապագան:

Պատուիրակութիւնը կը շեշտէ, որ միջազգային հանրութիւնը կոյր կը ձեւանայ, այդպիսով օգնելով թուրք-ազրայեճանական միութեան:

ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան կարեւոր նկատեց այս օրերուն Հայաստանի հանդէպ Ֆրանսայի բարեկամական վերաբերմունքը եւ յոյս յայտնեց, որ անկիւ պիտի նպաստէ Արցախի անկախութեան ճանաչման:

ՆԱԽԱԳԱՀ ԹՐԱՄԺ ՀԻԱՍԹԱՓՈՒԱԾ Է ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՀՐԱԴԱՂԱՐԻ ԴՐՈՒԹԵԱՆ ԽԱՆՏՈՒՄԸ

ՓՈՄՓԵՐՈ ՀԵՒԱՋԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՒՆԵՆԱՅ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԵՒ ԱԼԵԻԻ ՀԵՏ

Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ յայտարարած է, որ հիասթափուած է Լեռնային Ղարաբաղի տազնապի գօտիին մէջ հրադադարի մասին Հայաստանի եւ Ազրայեճանի միջեւ պայմանաւորաձօնութիւնները ջարդելու, չկատարելու փաստէն:

Շաբ.ը՝ էջ 2

ՓՈՒԹԻՆ ԵՒ ԷՐՏՈՂԱՆ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՍՏԵՂԾՈՒԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Քրեմլիկի մամուլ ծառայութիւնը տարածած է հաղորդագրութիւն մը, որուն մէջ կը տեղեկացնէ, թէ թըրքական կողմին նախաձեռնութեամբ Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին եւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ունեցած են հեռաձայնային հաղորդակցութիւն մը, որուն ընթացքին, շարք մը այլ հարցերու կողքին, քննարկուած է Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակը:

Շաբ.ը՝ էջ 3

ԱՎՆԱՐԿ

ՆՈՐ ՄԵԿՆԱՐԿ. ՄԵՐ ԿՇՈՎԱԳԱՏՈՒՄՆԵՐԸ

Լիբանանի կառավարության կազմութեան գործընթացը կը թուի, որ դրական են-թահողի վրայ է: Վարչապետի նշանակումի գործնական եւ արագ եղանակը կրնայ ան-պայման չկրկնուիլ կառավարութեան կազ-մութեան առումով, այսուհանդերձ կայ որոշ քաղաքական մթնոլորտ, որ վարչապետ Յա-րիրի պիտի յաջողի կազմել կառավարութիւ-նը: Կը թուի նոյնիսկ, որ պայմանականու-թիւնները կառավարութեան ձեւաչափի, թի-ւի առումներով դասական կառչածութիւննե-րը չունին այս փուլին: Յայտնաբար կայ մի-ջազգային մեկնարկ եւ նաեւ անոր ներշնչու-մը լիբանանեան-տեղական ուժերու վրայ՝ կանաչ լոյս ստացած գործընթացին ընդա-ռաջ շարժելու եւ չհանգուցելու գործընթաց-ները:

Ուղեւնչային իրադրութիւն կարելի էր նկա-տել Լիբանան-Իսրայել ծովային տարածքնե-րու սահմանազատման գործընթացի մեկ-նարկը: Այս հանգոյցը մաս կը կազմեր մի-ջազգային հանրութեան եւ յատկապէս Ուաշինկթընի կողմէ պաշտօնական Պէյրու-թին առջեւ դրուած թղթածրարներուն, որոնց անստճառով ալ կը կիրարկուէր ընդհանուր տնտեսական շրջափակման քաղաքականու-թիւն:

Ծովային տարածքներու սահմանազա-տումը տնտեսական գերշահիոյներ ապահո-վելու առումով տարածաշրջանային տարո-ղութիւն ունի: Պարարտ բաժնւներու ճշդու-մի հիման վրայ կատարուող սահմանազա-տումը որոշ կայունութեան հեռաւոր երաշ-խիքներ կը պարզէ: Կան տակաւին այլ հան-գուցակետեր՝ Զըզպալլայի նկատմամբ դրու-ող պահանջներէն մինչեւ պաղեստինցինե-րու բնակեցման առկախուած թղթածրար-ներ:

Վարչապետ Էտիպի հրաժարականը տե-ղի չտուաւ Ֆրանսական նախաձեռնութեան տապալումին: Նախագահ Մաքրոն յայտա-րարեց, որ նախաձեռնութիւնը պայմանա-կանացուած չէ վարչապետի թեկնածուի ան-ծով, այլ կը նպատակադրէ համալիբանանե-ան համախոհութեամբ բարենորոգումներու անյապաղ որդեգրումն ու այդ բլուրքին հա-մար նոր ծրագիրով նոր կառավարութեան կազմութիւնը:

Յիմա, այս ձեւով կորուստական նախաձեռ-նութեան երկրորդ արարն է, որ կը սկսի: Յա-րիրի վերստին հանդէս պիտի գայ բարենո-րոգումներու ծրագիրով: Այս փուլին աւելի հեռուէն կատարուող դիտարկումները պիտի նկատեն Ֆրանսայի աշխուժացման դիմաց թրքական պարտադիր կրաւորականութիւն մը:

Շարունակենք դիտարկումը՝ աշխատցնե-լով հայկական ոսպնեակը այս պարագային: Զըզպալլայի օրակարգով որքան ալ խանդա-վառութիւն չցուցաբերէ Ռիատը Նոր կառա-վարութեան կազմութեան աշխատանքնե-րուն հանդէպ, այնուամենայնիւ հզօր ազդե-ցութեան գործօն կը մնայ ընդհանրապէս Լի-բանանին եւ այս պարագային յատկապէս սիւննի զանգուածին վրայ, ուր թափանցած է Անգարան: Վարչապետը սիւննի համայնքի իրողական մեծամասնութեան ներկայացու-ցիչը կը նկատուի, իսկ այդ իրողական ներ-կայացուցչութիւնը կը հակի դէպի Ռիատ:

Նկատի ունենալով նաեւ Ռիատի եւ Ան-գարայի միջեւ աննախադէպ լարուածութիւ-նը, այստեղ համընկնում կայ ուրեմն Ռիատի եւ Փարիզի միջեւ, գէթ լիբանանեան քաղա-քական դաշտին վրայ թրքական թափան-ցումները չեզոքացնելու առումով:

Այսպիսով ալ կը բացատրուի հաւանա-բար Թուրքիոյ եւ իր ազդեցութեան ներքեւ գործող կազմակերպութիւններու համեմա-տական լռութիւնը: Արցախեան պատերազ-մի առաջին օրէն մինչեւ հիմա՝ ամիս մը նոյն այդ շրջանակներուն կողմէ որեւէ ցուցական, տեղեկատուական գործողութիւն չի նկատ-ւիր: Անելի՛ն. բացի ընկերային ցանցերու վրայ ոչ պաշտօնական պարագայական գրառումներէն, հակազդեցութիւն չկայ նաեւ Թուրքիայթի երեկոյ ՅՅԴ ԼԵՄ-ի եւ ՉՈՄ-ի Թուրքիոյ դեսպանատան առջեւ կազմակեր-պած ցոյցին: Մինչդէռ նախքան լիբանանե-ան քաղաքական նորագոյն իրադրութիւն-ներու այս ընթացքը, նուազագոյն հրապա-րակային քննադատութիւնները սուր հա-կազդեցութիւններու տեղի կու տային:

Կանխահաս է հաւանաբար նկատել, որ իրավիճակ փոխուած է: Կայ սակայն գուցէ ժամանակաւոր թրքական պարտադրուած կրաւորականութիւն մը: Յանկարծակի գոր-ծողութիւնները առանց բացառելու անշուշտ նկատենք, որ այս լռութիւնը չ'ենթադրէր ան-շուշտ ընդմիշտ չեզոքացում:

Ֆրանսական նախաձեռնութեան յաջո-ղութիւնը կը բխի ուրեմն նաեւ հայկական շահերէն: Իսկ այս հանգամանքները նկատի ունենալով Յայկական երեսփոխանական պլոքի ինքնուրոյնութիւնը նկատաշէշտող որոշումը՝ ներկայ փուլին Նոր մեկնարկին մասնակից դառնալու եւ ներդրում ունենալու տեսակետէն կշռադատած է թէ՛ լիբանանե-ան, թէ՛ համայնքային եւ թէ՛ համահայկա-կան շահերը:

«Ա.»

ԵՐԳԵՑՈՂԱԿԱՆ ՆՈՐ ՈՃԻ ԵՒ ԴՊՐՈՅԻ ՀԻՄՆ ԴՐԱԾ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱՎԱՐԸ

Երեկ առյաւելտ մեզմէ հեռացաւ հայրենի վաստակաւոր եւ հանրա-յայտ խմբավար Յարութիւն Թոփի-կեան: Դամազգայինի «Բ. Կանաչ-եան» երաժշտական քոլեճին եւ Երեւանի Կոմիտասի անուան պե-տական երաժշտանոցին միջեւ 1991-ին գոյացած գործակցութեան առաջին ընտրեալներէն մէկը եղաւ հայրենի վաստակաւոր խմբավար Յարութիւն Թոփիկեան, որ իր եռա-մեայ գործունեութեան ընթացքին ո’չ միայն լիովին արդարացուց իր մասին եղած դրական վկայութիւն-ներն ու իր վրայ դրուած յոյսերը, այլեւ ան իր խմբավարական արտակարգ շնորհով եւ հաղորդական խառ-նուածքով Դամազգայինի հովանաւորութեամբ եւ հովանիին տակ յաջողեցաւ շատ կարճ ժամանակի մէջ իր շուրջ համախմբել մեծ թիւով երիտասարդ-երի-տասարդուհիներ, որոնց համար «Երգելը» դարձաւ իրենց առօրեան լեցնող ու հոգիները շաղկապող անփոխարինելի վայելք ու պահանջ:

Յարութիւն Թոփիկեան «Գուսան»-ի տուած իր անդրանիկ համերգով, լի-բանանեան երգչախմբային արուեստի պատմութեան մէջ Նոր մը մը բացաւ եւ հիմը դրաւ երգեցողական Նոր ոճի մը եւ Նոր դպրոցի մը, որ ներկայիս իր անունով կը կոչենք «թոփիկեանական», որ կը յատկանշուի կատարողական մեծ հմտութեամբ ու բծախնդրութեամբ, եւ մանաւանդ գեղարուեստական բացառիկ յագեցուածութեամբ:

Այդ «դպրոց»-էն մեզի ժառանգ մնացին երկու շնորհալի երիտասարդ խմբավարներ Պարգէ Թապալաքեան եւ Գրիգոր Ալլոգեան: Ինք գնաց՝ հետքը մնաց: Զողը թեթեւ գայ վրաս:

Ննջե՛ խաղաղութեամբ, խմբավար: Յիշատակդ անթառամ պիտի մնայ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

27/10/2020

ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

Միւս կողմէ, Յայաստանի պաշտ-պանութեան նախարարութեան մամ-լոյ բանքեր Շուշան Ստեփանեան Նշեց, որ 27 հոկտեմբերի առաւօտե-ան, ժամը 10:00-10:15-ի շուրջ, հեռ-թական անգամ խախտելով հրադա-դարի դրութիւնը, ազդպէճնանական կողմը անօդանւներով (որոնցմէ մէկը ինկած է Յայաստանի տարածքին մէջ) եւ հրթիռահրետանային միջոց-ներով ռմբակոծած է Յայաստանի հարաւային սահմանի Իրանի հետ հատման կէտի հայկական սահմա-նապահ ուժերու դիրքերը:

Յայաստանի հարաւային ուղղու-թեամբ թշնամիին այդ ոտնձգութիւն-ները կանխելու նպատակով Յայաս-տանի սահմանապահ ուժերը դիմած են կանխարգելիչ գործողութիւննե-րու՝ հակառակորդին պատճառելով զգալի վնասներ եւ կորուստներ: Ստեփանեան Նշեց, որ հակառակոր-դը սահմանի տուեալ հատուածին մէջ օգտագործած է անօդաչու թռչող սարք:

Յայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան կառավարութեան կեդրո-նատեղիին մէջ հանդիպում ունեցաւ Ամենայն հայոց Գարեգին Բ. կաթո-ղիկոսին հետ:

Յայաստանի վարչապետի աշխա-տակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան յայտնեցին, որ հանդի-պումի ընթացքին քննարկուեցան ազդպէճնանական-թրքական յարձա-կումներուն պատճառով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավի-ճակը, ինչպէս նաեւ Յայաստան-Ար-ցախ-սփիւռք եռամիասնութեամբ թշնամիի գործողութիւններուն դէմ պայքարին միտուած քայլերը:

Հանդիպման ընթացքին վեհա-փառ հայրապետը Յայաստանեայց առաքելոյն կայնեց Յայաստանի եւ Արցախի կառավարութիւններուն՝ Արցախի ժողովուրդի ազատ ու ան-կախ կեանքի իրաւունքի պաշտպա-նութեան արդար պայքարին մէջ:

Երեկ ժողովուրդին յուլած ուղեր-ծին մէջ վարչապետ Նիկոլ Փաշինե-ան Նշած է, որ Արցախի ժողովուրդը, հայ ժողովուրդը, ամբողջ հայութիւնը պիտի կռուի անմնացորդ՝ ամէն ծա-ռի, ամէն քարի, ամէն սանթիմէթի եւ ամէն միլիմէթրի համար, եւ անհը-րաժէշտ պահուն ճշգրիտ հասցուած հակահարուածը թշնամիին համար կործանարար փլուզման ազդեցու-թիւն պիտի ունենայ:

Արցախի պաշտպանութեան նա-խարար, բանակի հրամանատար գօր. Ջալալ Յարութիւեան գերծ կա-ցուցութեան իր պաշտօնէն՝ վիրաւոր-ած ըլլալուն պատճառով, եւ անոր փոխարէն նշանակուեցաւ Միքայէլ



ՓՈՒԹԻՆ ԵՒ ԷՐՏՈՂԱՆ . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Քննարկուած է Լեռնային Ղարաբաղի տազնա-պի գօտիին մէջ իրադարձութիւններու զարգացումը: Ռուսական կողմը խոր մտահոգութիւն յայտնած է շարունակուող ռազմական գործողութիւններու, ինչ-պէս նաեւ Միջին Արեւելքէն ահաբեկիչներու աւելի լայնածաւալ ներգրամման առնչութեամբ», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Փութին տեղեկացուցած է Ազրպէյճանի եւ Յայաս-տանի ղեկավարութեան հետ կապերու եւ հրադա-դարի շուտափոյթ ձեռքբերման եւ ճգնաժամի մեղ-մացման նպատակով ձեռնարկուող քայլերու մասին: Պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է այսու-հետեւ եւս իրականացնելու Ռուսիոյ եւ Թուրքիոյ ար-տաքին քարաքական եւ պաշտպանական նախարա-րութիւններու, ինչպէս նաեւ յատուկ ծառայութիւնե-րու միջեւ համակարգում:

ՊԱՔԻԷՅՆ ԿՈՉ ՈՐՂՂԱԾ Է . . .

Շարունակուած Ա. Էջէն

Դայաստանի Դանրապետութեան նախագահի աշխատակազմի հասարակութեան հետ կապերու վարչութենէն կը տեղեկացնեն, թէ Պահրէյնի թագա-ւորի պատասխան նամակին մէջ նշուած է.

«Երախտագիտութիւն կը յայտնենք, որ կոչ ուղղե-ցիք մեզի առաւելագոյն ճիգեր գործադրելու եւ միա-նալու միջազգային հանրութեան ջանքերուն՝ հրա-դադար սահմանելու եւ երկու երկիրներուն միջեւ ու Լեռնային Ղարաբաղի մէջ արինաիեղութիւնը կան-խարգիլելու համար: Կը կիսենք նաեւ այն մտաւա-խութիւնը, որ այդ ցաւալի տազնապը կրնայ վերա-ծուիլ աւերիչ երկարաժամկետ պատերազմի այս կա-րելոր եւ զգայուն տարածաշրջանին մէջ, որուն զոհ պիտի երթան քաղաքացիական անձեր, եւ սպառնա-լիք պիտի ստեղծուի ամբողջ միջազգային անվտան-գութեան համար:

Մենք կը կիսենք ձեր կարծիքը, որ այս տազնապը չունի ռազմական լուծում, եւ բանակցութիւններն ու քաղաքական կարգաւորումը աւելի ընդունելի են՝ հասնելու միացեալ փոխըմբռնումի, կանխելու կո-րուստները, ինչպէս նաեւ խուսափելու մարդկային աղէտէ»:

Թագաւորը նշած է, որ Պահրէյնի արտաքին գոր-ծոց նախարարութիւնը կը միացնէ ջանքերը Շոցի երկիրներու համագործակցութեան խորհուրդի ընդ-հանուր քարտուղարութեան հետ, որ Շոցի համա-գործակցութեան խորհուրդի երկիրներուն անունով հրապարակած է յայտարարութիւն՝ կարեւոր նկա-տելով հրադադարի շուտափոյթ հաստատումը եւ կոչ ուղղելով ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին, որ ստանձնէ միջազգային անվտանգութեան եւ խաղա-ղութեան հաստատման իր պարտաւորութիւնները:

ՄԱՀԱԶԴ

ԴՅԴ «Կարմիր լեռ» կոմիտեն կը գուժէ իր շրջանի ընկերներէն

ԳԷՈՐԳ ՊԱԼՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 27 հոկտեմբեր 2020-ին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սիմա Պալճեան եւ դուստրը՝ Մեղրի Տէր եւ տիկին Զերոբ եւ Վերժին Պալճեան Տէր եւ տիկին Արա եւ Սնան Չէյթունլեան եւ զաւակը

Տիկին Վերժին Պալճեան Տիկին Լիւսի Չանազանեան եւ զաւակը Տիկին Աստղիկ Աքրապեան եւ զաւակուոնք Տէր եւ տիկին Դրաչ եւ Սոնա Բենդեզեան

եւ զաւակուոնք Տէր եւ տիկին Վահէ եւ Բրիստին Պալճեան եւ զաւակուոնք

Տէր եւ տիկին Տիգրան եւ Ռիթա Պալճեան եւ զաւակուոնք

Տիկին Սանդուխտ Պալճեան եւ զաւակուոնք Տիկին Անժել Պալճեան եւ զաւակուոնք Տիկին Աստղիկ Զիրտեան եւ դուստրը՝ Դեղինէ Տիար Սահակ Զիրտեան եւ զաւակուոնք Տէր եւ տիկին Ռազմիկ եւ Զնար Զիրտեան եւ զաւակուոնք

Պալճեան եւ Զիրտեան ընտանիքներ Գասամանեան եւ Բենդեզեան ընտանիքներ 2Էյթունլեան ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուս-նոյն, հօր, մեծ հօր, հօրեղբօր եւ հարազատին՝

ԳԷՈՐԳ (ՃՈՐԳ) ՊԱԼՃԵԱՆԻ (Ծնեալ Այնճար, 1957-ին)

մահը, որ պատահեցաւ երեքշաբթի, 27 հոկտեմբեր 2020-ին:

Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կա-տարուի այսօր՝ չորեքշաբթի, 28 հոկտեմբերին, կէսօ-րէ ետք ժամը 2:00-ին, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադ-րուի Այնճարի գերեզմանատունը:

●*Ներկայս ընդունիլ իբրեւ մահադգ:*
●*Ցաւակցութիւնները կ'ընդունուին յետ թաղման արարողութեան, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ սրա-հին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, իսկ մնացեալ օրերը՝ հանգուցեալին բնակարանը:*

●*ԾԱԼՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝ նուիրատուու-թիւնները կատարել «Արցախ ֆոնտ»-ին:*

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՀՐԱՅՐ ՍՈՂՈՄՈՆՆԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանը վերջերս խոր կսկիծով գումեց մահը եգակի անձնաւորութեան մը, որուն անունն ու վաստակը դեռ երկար տարիներ պիտի յիշուին եւ օրինակ դառնան գալիք սերունդներու:

Ադրարեւ, վարժարանիս 1967 կրթական տարեշրջանի շրջանաւարտներէն եղած է տիար Հրայր Սողոմոնեան: Ինչպէս գիտենք, ան, շնորհիւ իր ջանասիրութեան եւ հեգահամբոյր նկարագիրին, յարատեւող կամքին ու մարդկային յատկութիւններու նկատմամբ ցուցաբերած հաւատամքին, կրցած է շրջանցել կեանքի դժուարին ու դառն պայմանները, հասնիլ հոն, ուր երազած էր ըլլալ միշտ նուաճել գործատերի ու յաջողակ առեւտրականի կոչումը, պարտադրել ինքզինք միջազգային շուկաներու հարթակին վրայ ու լծուիլ սեփական աշխատանքի զարգացման:

Փաստօրէն, տարիներ շարունակ Հրայր Սողոմոնեան դարձաւ պատկառելի անուն մը, որով կը հպարտանայ առաջին հերթին ընտանիքը, ապա՝ ամբողջ գաղութահայ կեանքը, ազգը առանձնաբար, որովհետեւ ան, շնորհիւ իր ազնուասիրտ ու ազգանուր առանձնայատկութեան, եղաւ ջանադիր հայորդի մը, որ միայն ու միայն նուիրաբերեց, առանց ակնկալութեան օժանդակել, օգնեց, կարեկցանք ու գութ բաշխեց, հասաւ բոլորին, սիրուեցաւ եւ յարգուեցաւ բոլորէն:

Իրօք, Հրայր Սողոմոնեան, երկար տարիներ իր անսակարկ ծառայութիւնը մատուցեց հայ եկեղեցւոյ, դպրոցին, միութեան թէ ակումբին: Առանց երկմտանքի ան ընդամաքեց բոլորին եւ իր նկաւաբարոյական աջակցութեամբ կրցաւ ամուր ու շէն պահել ազգային կառոյցները, ի հարկին բարեգարդել, նորոգել, որպէսզի նորահաս սերունդը կարենայ ստանալ հայեցի կրթութիւն եւ դաստիարակութիւն:

Ան քաջ կը հաւատար ազգային արժեքներուն, աւանդութեան եւ հայեցի դիմագծի պահպանման անհրաժեշտութեան: Աւելին. ան թեւ ու թիկունք եր գաղութի տարբեր հայաբոյր կառոյցներու, որոնց կարգին՝ Հայ աւետարանական կեդրոնական բարձրագոյն վարժարանին: Բոլոր պատեի առիթներու, երբ վարժարանիս տնօրէնութիւնը դիմած է անոր, միշտ եւ անվերապաօրէն արժանացած է Հրայր Սողոմոնեանի ջերմ վերաբերումին եւ նկաւաբարոյական աջակցութեան: Ան չէ զլացած երբեք, աւելին. թիկունք կանգնած է որեւէ ծրագրի իրականացման՝ յանուն հայ վարժարանի գոյատեւման եւ առաքելութեան պահպանման:

Իր ողջ կեանքի ընթացքին եթէ երբեք Հրայր Սողոմոնեան արժանացաւ ազգային բարերարի կոչումին, ապա ատիկա՝ շնորհիւ իր մարդկային տեսակին, որով զատորոշուեցաւ ուրիշներէ: Ան մեր անձնական ու հաւաքական յիշողութեան մէջ պիտի մնայ իբրեւ բարի, համեստ ու ազնուարիւն հայ, որ ողջուց կրցաւ նուաճել բոլորին սրտերը ու սիրուիլ անխտիր բոլորին կողմէ:

Ճիշդ է, որ Հրայր Սողոմոնեանի անժամանակ մահով սփիւրջահայութիւնը կորսնցուց հարազատ ու բարեհոգի անձնաւորութիւն մը, որուն բացակայութիւնը զգալի պիտի ըլլայ երկար ժամանակ, այդուհանդերձ, հաւատացողն ենք, որ մեր սիրելի բարերարին բարի դէմքն ու հայատրուփ սիրտը պիտի մնան քանդակուած մեր բոլորին յիշողութեան մէջ:

Արժանաւորներու յիշատակը միշտ լոյսի մէջ պիտի մնայ:

ՀԱՅ ՄԻՏՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՐԱԳՈՅՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՆ

20 հոկտեմբեր 2020

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ՔԻՒՊԻՉԻ ՀԵՏ ...

Շարունակուած Ա. Էջէն

Քննարկումի նկիւ դարձան նաեւ թուրք-ազրպէյճանական յարձակումը Արցախի վրայ եւ այդ առնչուեալմբ ցարդ ՄԱԿ-ի մէջ կատարուող աշխատանքներուն անբաւարարութիւնը:

Բազրատունի դիտել տուաւ երկու չափ երկու կշիռ գործածելու ՄԱԿ-ի դիրքատրուումը եւ անտեսումը կատարուող ոճրիկն ու ազգերու ինքնորոշման իրաւունքին հիմունքով Արցախի ժողովուրդի կամքին:

Ան անհրաժեշտ նկատեց, որ միջազգային ընտանիքը անմիջական քայլերու դիմէ՝ սանձելու համար Թուրքիոյ եւ Ազրպէյճանի ահաբեկչական յարձակումները եւ վարձկաններու ներկայութիւնը, խնայելու համար թէ՛ Արցախի ժողովուրդը եւ թէ՛ պատերազմի ընդարձակումին հետեւանքով շրջանի կայունութեան ու անդորրութեան խախտումով ստեղծուելիք կացութեան գոհերուն կեանքերը:

Այս իմաստով Բազրատունի հրամայական պահանջ նկատեց համայն հայութեան դէմ նոր ցեղասպանութիւնը կանխարգիլել, անմիջապէս պարտադրել զինադուլ եւ ճանչնալ Արցախի Հանրապետութիւնը:

ԲՈՂՈՔԻ ՑՈՅՑԵՐ

ՍՊԱՆԻԱ



20 հոկտեմբերին Սպանիոյ մայրաքաղաք Մատրիտի մէջ տեղի ունեցած բողոքի ցոյցի մը ընթացքին Մատրիտէն եւ սպանական այլ քաղաքներէ հարիւրաւոր հալեր դատապարտեցին Արցախի եւ Հայաստանի վրայ Ազրպէյճանի ու Թուրքիոյ յարձակումները՝ «ահաբեկիչ» որակելով անոնց նախագահները: Միեւնոյն ժամանակ սթափելու կոչ ուղղեցին Սպանիոյ, որպէսզի հայոց 2-րդ ցեղասպանութիւն մը տեղի չունենայ:

Ցուցարարները նաեւ պահանջեցին ճանչնալ Արցախի Հանրապետութեան անկախութիւնը:

ՖՐԱՆՍԱ



23 հոկտեմբերին Ֆրանսայի Սթրազպուրկ քաղաքին մէջ հազարաւոր հայեր Ֆրանսայէն, նաեւ եւրոպական տարբեր երկիրներէ, ինչպէս՝ Պելճիքայէն, Լեհաստանէն, Հոլանտայէն բողոքի ցոյց կազմակերպեցին Մարդկային իրաւունքներու եւրոպական դատարանին դիմաց: Անոնք միջազգային հանրութենէն պահանջեցին արձագանգել Արցախի մէջ տեղի ունեցող թուրք-ազրպէյճանական ահաբեկչական գործողութիւններուն:

Ցոյցը սկսաւ մէկ վայրկեան լռութեամբ յարգելով ինկած հերոսներուն յիշատակը, ապա ցուցարարները ծափահարութիւններով ողջունեցին սահմանագիծին վրայ կանգնած հերոս տղաքը:

Մասնակիցները բարձրացուցած էին պաստառներ տարբեր գրառումներով. «Դադրեցուցէ՛ք ահաբեկչութիւնը», «Կանգնեցուցէ՛ք մարդասպան Էրտողանը», «Ձեր լռութիւնը յանցանք է», «Մենք խաղաղութիւն կ'ուզենք», «Արթնցէ՛ք. ձեր լռութիւնը կը սպաննէ իմ ժողովուրդս», «Չհուիլ չկայ, տղա՛ք» եւ այլն: Ցուցարարները նաեւ կը բացազանչէին «Հայաստան», «Արցախ», «Էրտողանն ու Ալիէնը ահաբեկիչներ են», «Ֆրանսան հայերու բարեկամն է», «Հայ զինուոր» եւ այլն:

Ցուցարարները նաեւ կոչ կ'ուղղէին թրքական խանութներ չմտնելու, թրքական ապրանք չգնելու, ինչպէս նաեւ այլ խանութներու կը յորդորէին՝ վերցնել թրքական արտադրութիւնները իրենց խանութէն եւ այլեւս չվաճառել:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԿԱԳՆԵՐ



* Խումբ մը ամերիկահայեր բողոքի ցոյց կատարեցին Տալասի մէջ գտնուող «Լաքիտ Մարթին» ռազմարդիւնաբերական ընկերութեան գործարանին մօտ:

Ցուցարարները դատապարտեցին թրքական անօդաչու թռչող սարքերու համար ամերիկեան բաղարդամասեր եւ ճարտարագիտութիւն տրամադրելու ընկերութեան քայլը, որուն պատճառով թրքական անօդաչուները կը մքթակոծեն Արցախի հայ բնակչութեան տուները:

Ցոյցին մասնակցողները բազմաթիւ պաստառներ բարձրացուցած էին՝ պահանջելով, որ ընկերութիւնը դադրեցնէ ռազմական նշանակութիւն ունեցող սարքերու վաճառքը Թուրքիոյ:

Նշենք, որ Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը դիմած է արտաքին գործոց նախարարութեան, մահաբեր արտածումները կասեցնելու պահանջով՝ ակնարկելով յատկապէս թրքական «Պայրաքտար» անօդաչուներուն համար նախատեսուած ամերիկեան բաղարդամասերու վաճառքին:

* Ալաքայի մէջ տեղի ունեցաւ ցոյց, որուն ընթացքին ցուցարարները իրենց աջակցութիւնը յայտնեցին Արցախի եւ Հայաստանի, նաեւ դատապարտեցին ազրպէյճանա-թրքական ահաբեկչական գործողութիւնները: Ցոյցի կազմակերպիչներէն Եւա Շարփի նկատել տուաւ, որ ցոյցին հայերու կողքին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ յոյները, ռուսները, ուքրաինացիները եւ քիւրտները:

Արցախի դրօշներով ու պաստառներով հայերը Ալաքայի բնակիչներուն պատմեցին, թէ իրականութեան մէջ ինչ կը կատարուի Արցախի մէջ:



ԽՍՐԱԳՐԱԿԱՆ «ՀԱՅՐԵՆԻԷ»-Ի

ԵՐԿԱՐ ՏԵԼԵՑ, ԲԱՅՑ... ՊԻՏԻ ՅԱՂԹԵՆՔ



Այո՛, այդպէս է:

Այս պատերազմը երկարեցաւ, կրնայ տակաւին երկա՛ր տեւել, բայց աւարտին պիտի յաղթենք:

Սուրբ հողին բանալիները յանձնելու՝ «Անին ծախուեցաւ»-ին կրկնութիւնը պիտի չկատարուի:

Պատերազմին տեւողութիւնը կանխատեսելի չէ: Ազրպէյճանի բռնապետ Ալիէնը առաջին օրն իսկ՝ սեպտեմբեր 27-ին, յոխորտանքով եւ մեծամտութեամբ յայտնած էր, որ «քանի մը օրէն» իր «հերոս» բանակայինները նախաճաշը Ստեփանակերտի մէջ պիտի ընեն, սակայն «տան հաշիւը» ռազմաճակատին վրայ սխալ դուրս եկաւ:

Գրեթէ ամիս մը անցած է այդ օրէն ետք, եւ Ստեփանակերտի մէջ թէ արցախեան այլ օճախներուն՝ նախաճաշը կը սպասարկուի տեղոյն հայ զինուորին ու ապաստաններու մէջ բնակութիւն հաստատած բնակիչներուն:

Եթէ վայրկեան մը բաղդատենք բռնատեր Ալիէի նախաճաշի գէի սեղանը, շրջապատուած՝ համաւարտու եւ իւր կամակատար սպասեակներով, զինւորական տարազով զգեստաւորուած Արցախի նախագահ Արայիկ Յարութեանեանի գաւաթ մը սուրճին հետ, հայոց բանակին խումբ մը քաջ արիւնքու կողքին... Որքա՛ն տարբերութիւն:

Ազրպէյճանի զօրասիւնները ո՛չ միայն հարուած ստացան եւ չկրցան յառաջանալ, այլ բազմիցս ստիպւեցան նահանջել:

Այսօր իրական պատկերը ցոյց կու տայ, որ եթէ «Ամէն ճամբայ Հոմ» կը տանի, այդ ճամբան ո՛չ Ստեփանակերտն է կ'անցնի, ո՛չ ալ Ստեփանակերտ կը տանի: Ստեփանակերտը միւսակէ, այլ ամէն մէկ ափ հող, ըլլալ այդ մէկը բարձունք, թէ ձոր կամ հարթ հաւասար շաւիղ, փակ է ու փակ պիտի մնայ ազերիին առջեւ:

Շար.ը՝ Էջ 7

ԷՐՏՈՂԱՆԻ ԱՍՏՂԱՀՈՅԼԻՆ ՄԷՋ ՈՉ ԹԷ ՀՈԳԵԲՈՒԺՆԵՐԸ ՄԵԿՈՎ ԱՆԵԼՑԱԾ ԵՆ, ԱՅԼ՝ ՀԻՒՆԴԻՆԵՐԸ

«Ձորոնա»-ն պատճառ է, որ Կեդրոնակայանցիին չբաւեն հայերէն թերթերը եւ Հայաստանի ծայնասփիւռը, հիմա կը հարստանայ ֆրանսական հեռատեսիլով:

Դարձած է իսկական համայնագիտարան:

Ընթերթի ժամուն անակնկալ կերպով այցի եկաւ.

- Մակար, Թուրքիան բոլոր քաղաքակիրթ երկիրներէն առաջ անցած է՝ շնորհիւ իր նախագահին, որ ինքզինք հռչակած է Ֆրանսայի նախագահի հոգեբուծ: Լսէ՛ ֆրանսական հեռատեսիլը:

- Լաւ է: Կը դարմանէ իր մեծամտութիւնը, իր ժողովուրդի եւ իր մոլեռանդութիւնը, տիրելու ախտը, megalomania-ն:

- Մարդկութիւնը ականատես եւ ականջալուր եղաւ ոչ թէ անմարդկային ոճրի մը, այլ՝ զազանային: Մոլորակներ նուաճող մեր դարուն դեռ կարելի՞ է հաւու գլուխ կորելու պէս մարդ գլխատել: Ֆրանսայի նախագահը դիմած է ազգային ինքնապաշտպանութեան՝ թոյլ չտալու համար երկրի մասնատումը, ինչ որ, ըստ երեւոյթին, Էրտողանին դժգոհութիւն պատճառած է, քանի որ անոր մէջ տեսած է տարածելու իր անսահման փառասիրութեան դէմ արգելք:

- Արմենակ, այդպէս է հետեւանքը կակուղ թաթիկ ըլլալու:

- Գլխատուած ուսուցիչին ողբերգական մահուան առիթով Էրտողան դիւանագիտական նուազագոյն ցաւակցութիւն չէր յայտնած ո՛չ Ֆրանսայի, ո՛չ անոր նախագահին եւ ո՛չ ալ դժբախտի ընտանիքին՝ ինքզինք չզրկելու համար իր հետեւորդներէն: Ֆրանսայի նախագահը պատասխանատու է երկրի ամբողջութեան եւ քսած է, թէ չի կրնար ընդունիլ, թէ նոյն երկրին մէջ տարբեր օրէնսդրութիւններ ըլլան՝ դուռ բանալով երկրի մասնատման: Այս խօսքերը հաճելի չեն թուած խալիֆայ Նոր-օսման սուլթանին, որ խախտելով միջազգային կանոնները՝ նախատած է նախագահ Մաքրոնը:

- Ֆրանսացիները եթէ չէին գիտեր, թէ որո՛նց հետ գործ ունէին, թող հայերուն հարցնէին:

- Երբ կրկեսին մէջ խաղողներէն մին կանոնները կ'անտեսէ, խաղը կը դադրի: Էրտողան բիրտ ձեւով կը յայտարարէ. «Երկրի մը ղեկավարին, որ իր երկրի միլիոնաւոր անդամներ ունեցող կրօնական տարբեր համայնքներուն այդ ձեւով կը վերաբերի, այն կարելի է ըսել, որ զաւցէ՛ք նախ ձեր մտային վիճակը քննել տուեք»: Անդուր եւ խախտելու է: Ֆրանսա տուն կանչած է Անգարայի իր դեսպանը:

- Արմենակ, հիմա ի՞նչ պիտի ըլլայ:

- Կը խորհիմ, որ Անգարայի կամ Պոլսոյ հոգեբուծարանները նախագահի գլխու հիւանդութիւն ախտորոշող Նոր մեծ բժիշկը պաշտօնի պիտի կոչեն: Եւ քսանչորս ժամ չանցած՝ ոչ թէ բժիշկներուն թիւը մէկով պիտի աւելնայ, այլ՝ հիւանդներուն: Եթէ ազատախոհ թերթ մնացած ըլլար Թուրքիոյ մէջ, լրագրող մը պիտի դիմէր Էրտողանին Ղուկա Սեւտարանիչին խօսքերով. «Բժիշկ, բժշկեա՛ք՝ զանձն քո»...

Մակարուիին բերած սուրճը մարեց Կեդրոնականցիին զայրոյթը:

ՄԱԿԱՐ Ի Գաղիա, 25 հոկտեմբեր 2020

ԱՐՑԱԽՑԻ ԿԻՆԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՐԱՐԵՐՈՒ ԴԵՄՈԱՐԱՏԱՆ ԴԻԻՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԻ ՊԵՏԻՆ ԵՒ ՅԱՆՁՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԲԱՅ ՆԱՄԱԿԸ



Երեւանի մէջ ժամանակաւորապէս ապրող արցախցի կանայք հանդիպում ունեցան Միացեալ Նահանգներու դեսպանատան դիւանագիտական բաժնի պետին հետ:

Արցախցի կիները այս հանդիպումին ընթացքին միջազգային հանրութենէն պահանջեցին համարժեք արձագանգ կատարել Արցախի մէջ թուրք-ազրպէյճանական ահաբեկչական յարձակումներուն եւ դեսպանատան ներկայացուցիչին յանձնեցին նամակ մը, որուն մէջ նշած են իրենց պահանջը՝ հանդիպում մը ունենալ դեսպան Լին Թրէյսիի հետ:

«Մենք յանձնեցինք նամակի տեսքով ձեւակերպուած մեր պահանջը եւ յայտնեցինք, որ պատասխանը պէտք է շատ արագ ստանանք, այլպէս կըրնանք դիմել ծայրայեղ քայլերու: Անհրաժեշտութեան պարագային վրաններ պիտի լարենք եւ այստեղ ապրինք: Մենք չունինք ուրիշ հայրենիք կամ ուրիշ բնակավայր», շեշտած է Ադամեան եւ անլցուցած է, որ իրենք պահանջած են նաեւ, որ Միացեալ Նահանգներ հանդէս զգան միայն յայտարարութիւն կատարելով:

Լիանա Ադամեան հաղորդած է, որ դեսպանատան դիւանագիտական բաժնի պետը իրենց պատասխանած է, որ պիտի փորձէ՝ հանդիպում մը կազմակերպել դեսպանին հետ:

Արցախցի կիներու ձեռքերուն կային պաստառներ, որոնց վրայ կային տարբեր գրառումներ, ինչպէս, օրինակ, «Մենք կը պահանջենք պատժամիջոցներ կիրարկել Թուրքիոյ եւ Ազրպէյճանի նկատմամբ», «Դադրեցուցէ՛ք ահաբեկչութիւնը», «Ինչո՞ւ ՕԹԱՆ-ի անդամը կը սպաննէ մեզ» եւ այլն:

Արցախցի կիները նաեւ կը վանկարկէին, թէ՛ «Մենք խաղաղութիւն կ'ուզենք», «Կոր ի՞նչ ըլլաք», «Մի՛ լռեք», «Կանգնեցուցէ՛ք Երտողանը», «Ճանչցէ՛ք Արցախը» եւ այլն:

ՄՇԱԿՈՒՅԹԸ ՍԱՀՄԱՆՆԵՐ ՉԻ ՃԱՆՉԱՐ. ՊԵՆՃԻՔԱԿԱՅ ԵՐԱԺԻՇՏԸ ՆՈՒՆԱԿԱԾ Է ՇՈՒՇԻԻ ՄՉԿԻԹԻՆ ՄԷՋ



Պրիւքսէլի Ազգային սենեկային նուագախումբի առաջին թաւջութակահար Սեւակ Աւանեսեան, որ Շուշիի հրթիռակոծուած Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ մէջ նուագած էր Կոմիտասի «Կռունկ» ստեղծագործութիւնը, երաժշտական կատարմամբ հանդէս եկած է Շուշիի մէջ գտնուող Վերին մզկիթին մէջ: Ան կատարած է անտորիացի թաւջութակահար Բիւս Սոլթանիի «Persian Fire Dance» ստեղծագործութիւնը:

Սեւակ Աւանեսեանը Դիմատետրի իր էջին վրայ տեղադրած է տեսանիւթը՝ նշելով, որ մշակոյթը սահմաններ չի ճանչնար:

«Ես շատ ուրախ եմ, որ կը գտնուիմ այս պարսկական մզկիթին մէջ, որ վերականգնուած է վերջերս: Այս ցոյց կու տայ, թէ հայերը ի՞նչպէս կը գնահատեն մշակոյթը՝ անկախ անկէ, թէ ո՞ր կրօնին կը պատկանի: Մենք հիմա կը պայքարինք իսլամիստ ահաբեկիչներու դէմ, բայց լաւագոյն ձեւով կը պահպանենք մզկիթը», նշած է Սեւակ Աւանեսեանը:

Հոկտեմբեր 8-ին Ազրպէյճանը երկու անգամ հըրթիռային հարուածներ հասցուցած է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցւոյ, որուն պատճառով վիրաւորւած են 3 ռուս լրագրողներ:

Տեղեկացնենք, որ Սեւակ Աւանեսեանը ծնած է Երեւան, 1989-ին: Ան Մետա Աբրահամեանի սաներն է:

Շար.ը՝ էջ 7

ԲԻՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՂԱԴԻՏԱՐԱՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ Է ԱՐՑԱԽՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՕՐԵԱՆ

Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի Վ. Համբարձումեանի անուան Բիւրականի աստղադիտարանը արդէն 3 շաբաթէն աւելի է, որ իր հիւրատան մէջ կը հիւրընկալէ Արցախէն եկած բնակիչները, հիմնականօրէն՝ երեխաներ, ինչպէս նաեւ՝ զանոնք խնամող մայրեր, տատիկներ եւ պապիկներ: Աստղադիտարանի տնօրէնութեան նախաձեռնութեամբ, ինչպէս նաեւ աշխատակիցներու եւ Բիւրականի համագիւղացիներու ջանքերով արցախցիներու համար ստեղծուած են յարմարուետ պայմաններ:

Երեխաները բնականոն կերպով կը շարունակեն իրենց կրթութիւնը Բիւրական գիւղի դպրոցին մէջ: Անկէ բացի, աստղադիտարանը կը զբաղի վերջիններու մշակութային եւ ժամանցային հարցերով, որպէսզի պատերազմական իրավիճակին մէջ անոնք առօրեան դարձնէ շատ աւելի հետաքրքրական եւ գունեղ: Մշակութային ծրագրի շրջանակներուն մէջ անոնք համար կազմակերպուած են տարբեր ձեռնարկներ՝ հանրամատչելի դասախօսութիւններ աստղագետներու, հրաւիրեալ հիւրերու մասնակցութեամբ, օգտագործելով աստղադիտարանի այգին՝ բուսաբանութեան եւ անզլերէնի դասընթացներ, գիտական ճանաչողական դասընթացներ, այցելութիւններ տեսարժան եւ մշակութային բազմազան վայրեր եւ այլն:

Այս ընթացքին երեխաները հասցուցած են այցելել Վ. Համբարձումեանի տուն-թանգարան, ծանօթանալ աստղադիտարանի գործունեութեան, կատարել աստղադիտում, առցանց հան-



դիպում ունեցած են հայ ճատրակի աստղերու հետ, ինչպէս նաեւ սկսած են բացայայտել Արագածոտնի մարզն ու Երեւանը. արցախցի երեխաները եղած են Բիւրականի Սուրբ Յովհաննէս եկեղեցւոյ մէջ, մասնակցած են Իսահակեան գրադարանի Ճ. Պայրոնի անուան արուեստի գրականութեան բաժնին մէջ կազմակերպուած Յովհաննէս Թումանեանի «Սասունցի Դաւիթ» պոէմի, «Գելը» հեքիաթի ընթերցման: Դպրոցական արձակուրդներու ընթացքին, երկու շաբաթ շարունակ երեխաները յաճախած են «ԹՈՒՄՕ» ստեղծարար արհեստագիտութիւններու կեդրոն՝ մասնակցելու յատուկ իրենց համար կազմակերպուած դասընթացներու: Շաբաթական մէկ անգամ երեխաներուն կ'այցելէ եւ դասընթացներ կ'իրականացնէ Լուսինէ Գրիգորեանի ղեկավարութեամբ տեսապլոկներու խումբը:

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՍԸ ՆՈՐ ԾՐԱԳԻՐԻ ՍԿՍԱԾ Է ԱՐՑԱԽԵՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ ԵՐԵՎԱՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ



«Երեւան իմ սեր» հիմնադրամը իր նոր նախաձեռնութեան շրջանակին մէջ հոգեբանական աջակցութիւն կը տրամադրէ Արցախի մէջ պատերազմական գործողութիւններու պատճառով Հայաստան տեղափոխուած երեխաներու համար:

«Երեւան իմ սեր» հիմնադրամէն կը տեղեկացնեն, որ ռազմական գործողութիւններու տարածքին գտնուող երեխաները առաւել խոցելի են եւ անպաշտպան. ուստի անոնց հոգեբանական աջակցութիւն ցուցաբերելը այս օրերուն կը դառնայ աւելի քան կարեւոր:

«Երբ սկսան ռազմական գործողութիւնները, տեղեկացանք, որ Արցախէն զգալի թիւով երեխաներ տեղափոխուելու են Հայաստան՝ մայրերու կամ խնամակալներու հետ: Ամիջապէս փորձեցինք հասկնալ, թէ ինչպէ՞ս կարելի է լաւագոյնս օգտագործել մեր կարելիութիւնները եւ օգտակար դառնալ անոնց: Նկատի առնելով, որ երեխաներուն մօտ կրնայ ըլլալ վախի, տագնապի զգացումներ, որոշեցինք յատուկ եռօրեայ ծրագիր մշակել, որուն շնորհիւ մեր մասնագետները՝ հոգեբանները, երաժշտական եւ հոգեբանական հոգաբարձութեան ճամբով կարենան օգնել երեխաներուն, որպէսզի դուրս գան ընկճուած վիճակէ», նշած է «Երեւան իմ սեր» հիմնադրամի տնօրէն Դրայր Դամբարեանը:

Ծրագրին մեկնարկը տրուած է հոկտեմբեր 9-ին: Առաջին փուլին

մասնակցած են 4-16 տարեկան մօտաւորապէս 80 երեխաներ, որոնք բաժնուած են երեք տարիքային խումբերու:

Հրայր Դամբարեան կ'ընդգծէ, որ ծրագրի իրականացման համար իրենց կ'աջակցին նաեւ մեծ թիւով կամաւորներ: «Անհրաժեշտ է, որ երեխաները սկիզբէն ձեռքագտնի պատերազմական գործողութիւններու պատճառով յառաջացած տագնապէն, որպէսզի անոնք կենքքին վրայ որեւէ ազդեցութիւն չունենայ», շեշտած է Դամբարեան:

Թեպէտ ծրագիրը ուղղուած եղած է երեխաներուն հոգեբանական աջակցութիւն տրամադրելու յոյժ կարեւոր գործին, սակայն ծրագրին առաջին օրերը ցոյց տուին նաեւ, որ երեխաներուն ծնողները կամ խնամակալները եւս ունին հոգեբանական աջակցութեան կարիք: Մեկնելով այդ անհրաժեշտութենէ՝ հիմնադրամին հոգեբանները աշխատանքներ տարին նաեւ երեխաներուն ծնողներուն հետ:

Հաղորդենք, որ «Երեւան իմ սեր» հիմնադրամը երեխաներուն համար կազմակերպած է նաեւ երաժշտական եւ թատերական ձեռնարկներ: Ծրագրին հեղինակները կը նշեն, որ հիմնադրամին դռները բաց են պատերազմական գործողութիւններու պատճառով հոգեբանական աջակցութեան կարիք ունեցող բոլոր երեխաներուն համար անխտիր:

«ԱՐՏԱԴՐՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ» ԿԱՐԳԱԽՕՍԸ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ ՈՐԱԿԻ ՉԱՓԱՆԻՇ ԴԱՐՁՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է. ԷՏԿԱՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ

Հայաստանի կառավարութիւնը ընդունած է «Հայաստանի Հանրապետութիւն թըրքական ծագում ունեցող ապրանքներու ներմուծման ժամանակաւոր արգելքի մասին» որոշումը, որ ուժի մէջ կը մտնէ այս տարուան աւարտին, 31 դեկտեմբերին: Այս գծով «Արմէնփրէս» հարցազրոյց կատարեց ալամփխիմէ դռներու եւ պատուհաններու, ապակիէ առարկաներու տեղական առաջատար արտադրող PROFAL ընկերութեան գլխաւոր տնօրէն Էտկար Աւետիսեանի հետ, նշեց, թէ այս նախագիծին ընդունումը մեր երկրին համար միանշանակ ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունի: Նախագիծը որոշակի առումով ուշ ընդունուած է, բայց ի հարկէ՝ ոչ ուշացած: Մինչ որոշումը ուժի մէջ մտնելու ժամանակահատուածը հասնի՝ այդ տեւողութիւնը կարելի է օգտագործել այլընտրանքներ, նոր մատակարարներ եւ գործընկերներ գտնելու համար: Չկայ թըրքական արտադրանք, որուն այլընտրանքը չենք



կրնար գտնել Հայաստանի մէջ, նոյնիսկ՝ մեր հայկական արտադրութեամբ եւ կամ ներմուծուած այլ շուկաներէ, չկայ հումք, որ չենք կրնար ձեռք բերել այլ երկիրներու մատակարարներէ: Թըրքական արտադրանքէն հրաժարիլը պէտք է ըլլայ ո՛չ միայն օրէնքի պարտադրանքով, այլեւ՝ մեզմէ իւրաքանչիւրիս գիտակցութեամբ եւ համագումով. առաջին հերթին, մենք մեզ՝ իբրեւ սպառող, պէտք է վերատեսութեան ենթարկենք ո՛չ միայն գործնական, այլեւ զգացական մակարդակով:

Էտկար Աւետիսեանը նշած է, որ նախորդ տարի Թուրքիայէն Հայաստան ներմուծուած է ըստ ծագման երկրին յատկանիշին, 268.1 միլիոն տոնարի ապրանք, որոնցմէ 21.6 միլիոն տոնարի ոչ թանկարժեք մետաղներ եւ անոնցմէ պատրաստուած իրեր: Հիմա ժամանակն է համապատասխան քայլեր ձեռնարկելու եւ վերատեսութեան ենթարկելու գործընկերային յարաբերութիւնները: PROFAL-ը կարելի է համարել այս ոլորտին մէջ մասնագիտացած եւ բազմամեայ փորձ ունեցող ընկերութիւն, որովհետեւ հումքը մնայուն ձեռք կը բերէ եւրոպական առաջատար մատակարարներէ: Մենք պատրաստ ենք մեր արտադրական ամբողջ ներուժը օգտագործելու, որպէսզի կարենանք փակել շուկայի փոխակերպման պատճառով յառաջացող բացը: Հակառակ անոր շատ կարճ ժամանակ անցաւ, բայց կրնամ արձանագրել, որ արտադրութեան ոլորտին մէջ մեր բազմաթիւ գործընկերները արդէն իսկ պատրաստակամութիւն յայտնեցին ամբողջութեամբ հրաժարելու թըրքականէն եւ հումքի ձեռքբերման պարագային առաջնահերթութիւնը տալ եւրոպականին, իսկ պատրաստի արտադրանքի պարագային՝ տեղականին, որովհետեւ արդէն իսկ պահանջարկի աճ կը նկատուի այս ուղղութեամբ, հիմա մենք բանակցութիւններ կը վարենք արտերկրի մեր մատակարարներուն հետ, որպէսզի Հայաստանը դիտարկեն իբրեւ մշտական գործընկեր եւ մեծածաւալ պատուերներու պարագային մեզի աւելի հասանելի պայմաններ եւ մրցունակ գիններ առաջարկեն: Մեզի համար շատ կարեւոր է, որ մեր տեղական բոլոր ընկերութիւնները կարելիութիւնը ունենան օգտուելու միայն լաւագոյնէն, ինչպէս նաեւ կարենան տեղական եւ արտասահմանեան սպառողին առաջարկել միայն լաւագոյնն ու որակեալը:

Հարցազրոյցին աւարտին Էտկար Աւետիսեան, խօսքը ուղղելով գործընկերներուն, յայտնեց. «Միրելի՛՜ գործընկերներ, ամէն ինչ կախեալ է մեզմէ իւրաքանչիւրիս պատասխանատու մօտեցումէն: Մենք մեր աշխատանքով պիտի կերտենք հայկական արտադրութեան նոր մշակոյթ, պիտի ձեւադրենք ամուր տնտեսութիւն եւ հզօր երկիր, իսկ հայկական արտադրանքը՝ «ԱՐՏԱԴՐՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ»-ը պիտակը, պիտի դարձնենք բարձր որակի նոր նշանձող ամբողջ աշխարհի տարածքին: Ուրեմն՝ բոլորս ի գործ»:

Պատրաստեց՝ ՍԱՐԻՆԱ ՀԱՄԱՄԵՆԱՆ



ԱՐՑԱԽ ՖՈՐՏ «ՅԱՂԹԵԼՈՒ ԵՆՔ» ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Գոգո Յաշեղեան	300.000 լ.ն.
Միեր Զենտիրճեան	100.000 լ.ն.
Գօգօ Պորանեան	200.000 լ.ն.
Բենիամին եւ Վերա Պջաքճեան	1.000.000 լ.ն.
Փոքրիկն Սերիկա Գասապեան	10.000 լ.ն.
Արամ Պեքարեան	300.000 լ.ն.
Յրակ Տարազճեան	200.000 լ.ն.
Բալիկ Տարազճեան	200.000 լ.ն.
Նայիրի Տարազճեան	200.000 լ.ն.
Գաքրիել Պալթայեան	100.000 լ.ն.
Քաջայր Գուճանեան	70 \$
Բաֆֆի Յովակիմեան	100.000 լ.ն.
Թամար Մխիթարեան	100.000 լ.ն.
Գայեանէ Մխիթարեան	150.000 լ.ն.
Յակոբ Էթիւմէզեան	100.000 լ.ն.
Սօսի Պալեան	500.000 լ.ն.
Լոզոյեան ընտանիք	1.000.000 լ.ն.
Ժոզէֆ Տէմիրճեան	1.000 \$
Արաքսի Շահինեան	100.000 լ.ն.
Գրիգոր Վարդապետեան	20.000 լ.ն.
Գեորգ Ունանեան	100.000 լ.ն.
Փիեռօ Յաւտճեան	2.000.000 լ.ն.
Դաւիթ Թիւթիւնճեան	200.000 լ.ն.
Պօղոս Ճուլֆայեան	100 \$
Պօղոս Չլոըրեան	50.000 լ.ն.
Ատիպ Ղոյ	20.000 լ.ն.
Նոյեմի Գայայեան	20.000 լ.ն.
Շաքէ Գիգիրեան	50.000 լ.ն.
Թամար Զազապեան	10.000 լ.ն.
Մկրտիչ Սուզասեան	30.000 լ.ն.
Տիգրան Չարքեան	20.000 լ.ն.
Սեդրակ Զերթէշեան	50.000 լ.ն.
Յրայր Ասուրեան	100.000 լ.ն.
Փիեռ Մարգումանեան	100.000 լ.ն.
Աւօ Զէշիշեան	50.000 լ.ն.
Ճորճիկ Աշճեան	15.000 լ.ն.
Լիզա Պասիլ	60.000 լ.ն.
Կարօ Զորճիքեան	50.000 լ.ն.
Մակի Գալայճեան	20.000 լ.ն.
Յրակ Գասպարեան	280.000 լ.ն.
Նազօ եւ Վաչէ Արաքսեզեան	505.000 լ.ն.
Ժաք Պասիլ	50.000 լ.ն.
Էյօ Սարգիսեան	50.000 լ.ն.
Մարիժան Զեօշկերեան	20.000 լ.ն.
Մոնիք Թոքճեան	20.000 լ.ն.
Լիանա Շերճանեան	10.000 լ.ն.
Սազօ Սահակեան	40.000 լ.ն.

Յենրի Մխճեան	700.000 լ.ն.
Յարութիւն Մալիքեան	50.000 լ.ն.
Քրիստին Սրապոնեան	100.000 լ.ն.
Պաղտասար Յարութիւնեան	100.000 լ.ն.
Գօգօ Յարութիւնեան	50.000 լ.ն.
Սիմոն Պալապանեան	20.000 լ.ն.
Սիլվա Եղիայեան	20.000 լ.ն.
Ռոսին Առաքելեան	20.000 լ.ն.
Աիկ Յարութիւնեան	20.000 լ.ն.
Նարեկ Յարութիւնեան	20.000 լ.ն.
Նարեկ Յարութիւնեան	30.000 լ.ն.
Կարինէ Պաղչճեան	50.000 լ.ն.
Սաթենիկ Էքմէքճեան	20.000 լ.ն.
Ալին Յարութիւնեան	50.000 լ.ն.
Լիզա Պաղչճեան	20.000 լ.ն.
Մարիա Ապաճեան	50.000 լ.ն.
Ժորժ Աթրիպ	20.000 լ.ն.
Մատլէն Ինճեան	50.000 լ.ն.
Սիլվա Սարգիսեան	20.000 լ.ն.
Եսաեր Պալշի	20.000 լ.ն.
Ապետ Սուսա	20.000 լ.ն.
Ֆուատ Խազզում	20.000 լ.ն.
Յարութ Յարութիւնեան	20.000 լ.ն.
Մկրտիչ Սուքիասեան	20.000 լ.ն.
Ռիթա Զեօշկերեան	40.000 լ.ն.
Գեորգ Արթիւնեան	20.000 լ.ն.
Պասսամ Յասսուն	50.000 լ.ն.
Տանի Իպրահիմ	20.000 լ.ն.
Ազգային մը	200.000 լ.ն.
Գեորգ Երանոսեան	30.000 լ.ն.
Սարգիս Չերչեան	50.000 լ.ն.
Արամ Նալպանտեան	50.000 լ.ն.
Յարութ Պջաքճեան	20.000 լ.ն.
Յակոբ Զէշիշեան	50.000 լ.ն.
Էյօ Սարգիսեան	100.000 լ.ն.
Մարալ Սողոմոնեան	20.000 լ.ն.
Միհրան Կրպոյեան	100.000 լ.ն.
Վարդան Նաճարեան	10.000 լ.ն.
Բենօ Պապիկեան	50.000 լ.ն.
Արսէն Թուրթեան	20 \$
Աւօ Չարմէնեան	150.000 լ.ն.
Ազգային մը	150.000 լ.ն.
Տենի Մազաքեան	100 \$
Յակոբ Յովակիմեան	200.000 լ.ն.
Թոնի Ունճեան	200.000 լ.ն.
Լեւոն Ապտել Մասիի	50.000 լ.ն.
Ալէքսան Նատըր	100.000 լ.ն.

Սահակ Մատարիքեան	15.000 լ.ն.
Յուլեր Աշճեան	50.000 լ.ն.
Անդրանիկ Ախրապեան	100 \$
Յարութ Սարգիսեան	20.000 լ.ն.
Աւօ Ղալօղլեան	20.000 լ.ն.
ՅՅԴ Սարդարապատ կոմիտեութիւն (Ա. Աշճեան խումբ)	190.000 լ.ն.
Սեւան Յովակիմեան	10.000 լ.ն.
Անի Նարկիզեան	50.000 լ.ն.
Սաքայեան ընտանիք	1000 լ.ն.
Լուսին Տէրլուսինեան	5.000 լ.ն.
Գոհարիկ Թորոսեան	5.000 լ.ն.
Կարապետ Շանթաքեան	10.000 լ.ն.
Վահէ Ֆիլիքեան	50.000 լ.ն.
Մարկրիթ Վարդիվառեան	5000 լ.ն.
Ազգային մը	5.000 լ.ն.
Վահէ Ֆիլիքեան	30.000 լ.ն.
Գեորգ Աթիքեան	50.000 լ.ն.
Վարդգէս Սարիատեան	10.000 լ.ն.
Ազգային մը	50.000 լ.ն.
Սիլվա Թաշճեան	15.000 լ.ն.
Վլատիմիր Խոզեան	20.000 լ.ն.
Գեորգ Նալպանտեան	10.000 լ.ն.
Եասմին Յարքեան	5.000 լ.ն.
Վահէ Սօջօլեան	50.000 լ.ն.
Մայք Փարիկ Սիմոն Սիմոնեան	100.000 լ.ն.
Ղազարեան ընտանիք	50.000 լ.ն.
Յարութիւն Տօքմէքճեան	50.000 լ.ն.
Անժել Լեւոնեան	20.000 լ.ն.
Կարօ Չուքատարեան	50.000 լ.ն.
Սրբ. Զառասնից Մանկանց Թաղական խորհուրդ	500.000 լ.ն.
Մանօ Չուքատարեան	50.000 լ.ն.
Ծաւի եւ Մարգրիտ Ղազարեան	30\$
Պետիկ Շառուկեան	150.000 լ.ն.
Արմէն Սասունեան	30.000 լ.ն.
Վազգէն Յակոբեան	100.000 լ.ն.
Յարութ Յակոբեան	100.000 լ.ն.
Սարգիս Յակոբեան	100.000 լ.ն.
Շանթ Կարապետեան	20.000 լ.ն.
Պրօ Կեօվճեան	20.000 լ.ն.
Կիրակոս եւ Նորա Գարակէօզեան	60.000 լ.ն.
Փոքրիկն Արին Մանճիկեան	200.000 լ.ն.
Փոքրիկն Արեն Գուճանեան	100.000 լ.ն.
Անի Գրաճեան	150.000 լ.ն.
Վարդգէս Պետրոսեան	1.000.000 լ.ն.
Արամ Պիլեգիկճեան	50.000 լ.ն.
Սարգիս Անանեան	400.000 լ.ն.
Ս. Ներսէս Շնորհալի թաղ. խորհուրդ	250.000 լ.ն.
Ս. Ներսէս Շնորհալի Տիկնանց յանձնախումբ	150.000 լ.ն.
Փոքրիկն Զիլիթել Խրիմեան	50.000 լ.ն.
Վանա եւ Յակոբ Յաճիմանուկեան	15.000 լ.ն.
Փոքրիկներ Տիգրան եւ Սէրլի Գինոսեան	50.000 լ.ն.
Աւազ Թովճեան	150.000 լ.ն.
Նազօ Գիտանեան	150.000 լ.ն.
Մայք Մելիքեան	50.000 լ.ն.
Լուսին Գինոսեան	100.000 լ.ն.
Սեդրակ Յաճիմանուկեան	25.000 լ.ն.
Ազգային մը	200.000 լ.ն.
Սեդա Զէշիշեան	20.000 լ.ն.
Մարօ Տէր Գեորգեան	100.000 լ.ն.
Ճորճ Եղիայեան	20.000 լ.ն.
Ազգային մը	150.000 լ.ն.
Սարգիս Միքայէլեան	500.000 լ.ն.
Փոքրիկն Կարեն Գրիգորեան	300.000 լ.ն.
Մարտավանեան ընտանիք	100.000 լ.ն.
Սարգիս Պուտաքեան	1.000.000 լ.ն.
Ազգային մը	200.000 լ.ն.
Դաւիթ Գրիգորեան	100.000 լ.ն.
Նելլի Կեօնիկեան	100.000 լ.ն.
Սօսի Կեօնիկեան	100.000 լ.ն.
Պօղոս Ասողլեան	10\$
Այտա Զենտիրճեան	100.000 լ.ն.
Վիքի Գարգաշ	100.000 լ.ն.
Ժազլին Ազլեան	100.000 լ.ն.
Անի Գեորգեան	50.000 լ.ն.
Սեդա Գեորգեան	50.000 լ.ն.
Անի Մարգարեան	50.000 լ.ն.
Տեսիլ Զենտիրճեան	50.000 լ.ն.
Լորանս Փոքրաճեան	50.000 լ.ն.
Մեսրոպ Զենտիրճեան	100.000 լ.ն.
Ժաք Զէլճեան	50.000 լ.ն.
Մարալ Փափազեան	20.000 լ.ն.
Փիեռ Սուսա	20.000 լ.ն.
Նշան Պալեան	50.000 լ.ն.
Արփիկէ Զահուլճեան	50.000 լ.ն.
Սիրարփի Գուճանեան	50.000 լ.ն.
Յարութիւն Թորոսեան	100.000 լ.ն.
Յովիկ Թորոսեան	50.000 լ.ն.
Նանար Յակոբեան	25.000 լ.ն.
Ազգային մը	15.000 լ.ն.
Ներսէս Պետիկեան	1.000.000 լ.ն.
Կարօ Ապաճեան	50.000 լ.ն.
Կի Ժամկոչեան	50.000 լ.ն.
Առաքել Սարգիս Փանոսեան	200.000 լ.ն.
Վահէ Տարազճեան	100.000 լ.ն.
Տիգրան Աճէմեան	50.000 լ.ն.
Անդրանիկ Սերոբեան	20\$
Վիգէն եւ Ռազմիկ Մելեքեան	1.500.000 լ.ն.
Արեն եւ Ալիք Պալիքեան	750.000 լ.ն.
Կարեն Գրիգորեան	500.000 լ.ն.
Շանթ Տէրոյեան	100.000 լ.ն.
Տէսի Տէրվիշեան	50.000 լ.ն.
Պերճ Ամսէեան	50.000 լ.ն.
Եղիկ եւ Զրիստափոր Բարսեղեան	30.000 լ.ն.
Գրիգոր Մըկրեան	30.000 լ.ն.
Շանթալ, Վալերի եւ Սիւթիա Նարկիզեան	100.000 լ.ն.
Վարդան Չրթիկեան	50.000 լ.ն.

ԺԱՄԱՆՅ

ԽԱԶԲԱՌ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

- Մեծիօսիկ, անձնագով - Ահաւասիկ:
- Մեծ Յայթի Տուրուբերան Նահանգի գաւառներէն - Թելի վերածել:
- Ափսո՛ս - Մաշած, ծիրած:
- Ֆրանսական գետ - Մանր հատերով բոյս:
- Յուդարկաւորութիւն - Կնիւն:
- Էզ շուն - Ուրիշ - Փոքրացնող մասնիկ:
- Ածականակերտ մասնիկ - Ձի - Լակ:
- Ֆրանսական քաղաք - Բակ:
- Ենթիշխանուիի - Նախամայր:
- Քաջալերուիլ, գօրանալ:
- Մեղէխ, բռնատեղ - Ձգտիլ:

ՈՂՂԱՅԱՅԵԱՅ

- Դրամ - Փորագրութեամբ ստացուած ստեղծագործութիւն:
- Խթում, նախատօնակ:
- Շնչաւոր, ստեղծուած - Կակուղ միս:
- Յիսուսի առաքելներէն - Երդինջ:
- Անձնական դերանուն - Բրդեղէն:
- Խիպ, պատկառանք - Ախորժ:
- Լերան շուք մասը - Ոգելից ըմպելի:
- Վայրի մանր խնձոր - Այբուբենէն - Ածականակերտ մասնիկ:
- Վախկոտ - Սողոմոն Տարօցիի երկերէն՝ «... լոյս»:
- Թեթել փոխադրակառք:
- Բոսոր - Լարաւոր նուագարան:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

2	4	9		3				1
				8			3	
			1		7			
1					9	8		3
			6					
	5	6			7			2
		1		4	2		8	
	3						5	
		7		2	8			

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 բառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրառումով իւրաքանչիւր բառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 բառակուսիները՝ իւրաքանչիւր բաժին ունենայ 1էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո'չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել մինչեւ շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակուսիներուն մէջ զետեղուած են:

ՆԱԽՈՐՂ ԺԱՄԱՆՅԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ

ԽԱԶԲԱՌ ԹԻ 7927

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Մ	Ա	Ը	Վ	Ո	Տ	Ա	Ն	Ի	Բ	Բ
2	Ա	Ր	Ը	Ս	Ի	Ի	Ր	Ա	Ն	Ը	Է
3	Յ	Ի	Ս	Ը	Ս	Ը	Ս	Ա	Զ	Ե	Լ
4	Ր	Ն	Տ	Ի	Լ	Ս	Ա	Ն	Ը	Է	Լ
5	Ի	Ս	Լ	Ս	Ա	Ն	Ը	Ս	Ա	Զ	Է
6	Վ	Ո	Տ	Ա	Ն	Ի	Բ	Բ	Է	Լ	Է
7	Ա	Ն	Պ	Ա	Տ	Ի	Բ	Է	Լ	Է	Լ
8	Ա	Ր	Ս	Ա	Ն	Ը	Ս	Ա	Զ	Է	Լ
9	Ո	Ն	Տ	Ա	Ն	Ը	Ս	Ա	Զ	Է	Լ
10	Ո	Ն	Տ	Ա	Ն	Ը	Ս	Ա	Զ	Է	Լ
11	Ն	Ս	Ը	Վ	Ո	Տ	Ա	Ն	Ի	Բ	Բ

ՍՈՒՏՈՔՈՒ

5	6	1	8	9	3	7	2	4		
9	4	8	2	7	5	1	3	6		
3	7	2	6	1	4	5	8	9		
1	8	4	3	5	7	6	9	2		
7	5	3	9	2	6	4	1	8		
6	2	9	4	8	1	3	7	5		
2	1	7	5	6	8	9	4	3		
4	9	5	7	3	2	8	6	1		
8	3	2	1	4	9	2	5	7		

ԼԻԲԱՆԱՆԻ ԼՈՂԱՐԵԱԻԻ
ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՄՆԵՐ

ԹՈՆԻ ՆԱՍՍԱՐ
ՎԵՐԸՆՏՐՈՒԵՑԱԲ
ՆԱԽԱԳԱՅ



Նախորդ շաբաթավերջին Մոն լա Սալի մեջ (Այն Սաատե) տեղի ունեցան Լիբանանի լողարշավի ֆետերասիոնի ընտրությունները՝ ներկայութեամբ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան ներկայացուցիչին:

Անոր իրենց մասնակցութիւնը բերին ֆետերասիոնին մօտ անդամագրուած 24 ակումբներէն 18-ին ներկայացուցիչները:

Մրցակից ցանկի չգոյութեան պատճառով իրենց թեկնածութիւնը առաջադրած 11 անձերն ալ ընտրուեցան Նոր ֆետերասիոնի անդամ:

Նշենք, որ երկրորդ խտաշրջանի մը համար Նախագահ վերընտրուեցաւ Թոնի Նասսար:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԼԱՅՍԹԸՐ ՍԻԹԻ
ԻՐԱՅԱՏՈՒԿ ՆՈՒԱՃՈՒՄԸ



Անգլիոյ ֆութպոլի ախոյեանութեան «Փրեմիեր-Լիկ»-ի 6-րդ հանգրուանին ծիրին մէջ Լայսթըր Սիթի, որ Լոնտոնի մէջ հիւրը եղաւ Արսենալի, արձանագրեց 1-0 արդիւնքով յաղթանակ մը: Մրցումին միակ կողմը նշանակեց Ճեյմի Վարտի, աւարտէն տասը վայրկեան առաջ:

Իր արձանագրած այս յաղթանակին շնորհիւ խումբը բարձրացաւ 4-րդ դիրք՝ իր տրամադրութեան տակ ունենալով 12 կէտ:

Այս յաղթանակը կը նկատուի կարեւոր նուաճում մը:

«Opta Sport»-ի տուեալներուն համաձայն, Լայսթըր Սիթի Արսենալի դաշտին վրայ իր վերջին յաղթանակը արձանագրած էր 47 տարի առաջ, 1973-ին:

ԻՏԱԼԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՅՐՆԵՐ ԿՈԼԻ
ՅԵՂԻՆԱԿ՝ ԻՐԱՐՈՒ ԴԵՄ
ԿԱՏԱՐՈՒԱԾ ՄՐՅՈՒՄԻՆ



1949-էն ետք առաջին անգամ ըլլալով Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան՝ «Քալչիօ»-ի մրցումներուն երկու եղբայրներ դարձան կոլի հեղինակ՝ խաղալով իրարու դէմ:

Արդարեւ, Պենսկէնթո-Նափոլի 5-րդ հանգրուանի մրցումին հիւրընկալ կազմէն Ռուպերթօ Ինսինյէ 30-րդ վայրկեանին նշանակեց կոլ մը: Իր կարգին, անոր մեծ եղբայրը՝ Լորենցօ Ինսինյէ, կոլ մը նշանակեց՝ ի նպաստ Նափոլիի, 60-րդ վայրկեանին:

Մրցումը աւարտեցաւ Լորենցոյի կազմին՝ Նափոլի յաղթանակով, 2-1 արդիւնքով:

Նախագէտ, առաջին անգամ ըլլալով 4 դէկտեմբեր 1949-ին սման բան մը տեղի ունեցած էր Ինթեր Միլան-Լազիօ Ռոմա մրցումին, երբ երկու եղբայրներ՝ Իսթվան եւ Ֆերենց Նիքերս կոլի հեղինակ դարձած էին իրարու դէմ իրենց կատարած մրցումին ընթացքին: Այս մասին յայտնեց «Corriere dello Sport»-ը:

«ԷՄ. ԷՄ. ԷՅ.».

ՌՈՒՄԱՅԱՅ ԷՂՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆԵԱՆ
ՄԵԿՆԵՑԱԲ ԱՐՅԱՆ

Խառն մենամարտերուն («ԷՄ. ԷՄ. ԷՅ.») մէջ Խանդէն եկող ռուսահայ Էդուարդ Վարդանեան մեկնեցաւ Արցախ: Լուրջ հաղորդեց «Sport24» մարզական կայքը:

29 տարեկան մարտիկը յայտնած է, որ Արցախ կը մեկնի հայ բնակչութեան մարդասիրական օժանդակութիւն տրամադրելու համար:

Էդուարդ Վարդանեան ծնած է Երեւան:

«ԷՄ. ԷՄ. ԷՅ.»-ի մէջ ան կատարած է 24 մենամարտ եւ արձանագրած 20 յաղթանակ:



ՖՐԱՆՍԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

18 ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ
ՏՈՒՊԼԷ ՄԸ ԻՐԱԳՈՐԾԵՑ

Ֆրանսայի ֆութպոլի 19 տարեկանէն վար ախոյեանութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, Նանթ, որ Նախորդ շաբաթավերջին հիւրը եղաւ Լը Մանսի, արձանագրեց 4-0 արդիւնքով յաղթանակ մը:

Յաղթական կազմէն Գոռ Մանուէլեան (18 տարեկան), հակառակ անոր որ դաշտ ներկայացաւ 70-րդ վայրկեանին, սակայն յաջողեցաւ **տուպլէ** մը իրագործել:

Գոռ Մանուէլեան, որ ծնած է 2002-ին, Ստեփանակերտի մէջ, Ֆրան-



սայի ֆութպոլի 19 տարեկանէն վար Նախորդ տարեշրջանի ախոյեանութեան 19 մրցումի ընթացքին նշանակեց 17 կոլ եւ կատարեց 9 **էսիսթ**:

ՖՈՒԹՊՈԼԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՍՍԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՔՈՒԷՅԹ
ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՁՆՋՈՒԵՑԱԲ

Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի մամուլային բարտուղարութենէն կը տեղեկանանք, որ 11 նոյեմբերին Երեւանի մէջ Նախատեսուած Հայաստան-Քուէթ ֆութպոլի միջազգային բարեկամական մրցումը ջնջուած է:

Քուէթի ֆութպոլի ֆետերասիոնը, հաշուի առնելով իր երկրին եւ անկէ դուրս հետզհետէ աւելիով տարածուող «Քորոնա» ժահրին պարագան, պաշտօնական նամակով մը Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնէն խնդրած է այդ մրցումը չեղեալ նկատել:

Նշուեցաւ, որ քուէթցիները յոյս յայտնած են, որ երկու կազմակերպութիւններուն միջեւ սերտ համագործակ-



ցութիւնը կը շարունակուի, եւ ապագային կարելի կ'ըլլայ տարբեր հաւաքականներու մակարդակով անպայման ֆութպոլի բարեկամական մրցումներ կատարել:

ԵՐԿԱՐ ՏԵԻՅ, ԲԱՅՑ...

Շարունակուած 4-րդ էջէն

Թշնամին, անօդաչու սաւառնակներու կողքին, գործի լծած է Նաե Ինքնագործ իրաւայէլը... Բացայայտ է, որ անոր տրամադրութեան տակ եղող իրաւայէլներուն եւ անձնակազմին մէկ մեծ մասը զոհը դարձած է արցախցիի հրետանիին...

Ալիեւի բանակը այնքան զինուոր եւ վարձկան ոճրագործ կորսնցուցած է, որ հաւանաբար ան միլիոններ պատրաստ է մսխելու համակարգչային ընկերութիւններու հետ, անշունչ ելեկտրոնային վարձկաններ՝ ռուպորներ պատրաստելու համար, սակայն հոս ալ արդիւնքը պիտի մնայ անփոփոխ:

Ինչո՞րէ: Որովհետեւ ոչ ոք կրնայ ՀԱՅ ԶԻՆՈՒՐ պատրաստել: Հողին կառչած

ՄԱՆԱԳՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՆԵՐ ...

Շարունակուած 5-րդ էջէն

Փոքր տարիքէն ընտանիքին հետ տեղափոխուած է Պելճիքա: Արդէն 20 տարեկանին աւարտած է Պրիւքսելի Թագաւորական երաժշտանոցը, այնուհետեւ միաժամանակ սորված է Պելճիքայի թագուհի Ելիզաւետայի անուան կապիլլային եւ Պերլիի **ասպիրանտուրային** մէջ:

Սեակը շարք մը միջազգային մրցոյթներու յաղթող է:

Ան եղբօրը՝ Զրաչեայ Աւանեսեանին հետ ստեղծած է եռեակ, որ կը կոչուի «Avanesyan Trio»: Երաժիշտները յաջողութեամբ նուագահանդէսներ կ'ունենան աշխարհի տարբեր երկիրներու բեմերու վրայ:

ԹԵՆԻՍԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՍԱՒՈՐՈՒՄ

ՃՈՔՈՎԻՉ ԿԸ ՄԵԱՅ
ԱՌԱՋԻՆ. ԽԱԶԱՆՈՎ՝
18-ՐԴ ԴԻՐԵԻՆ ՎՐԱՅ



Թենիսի միջազգային ֆետերասիոնին կողմէ իրապարակուած դասաւորման առաջին տասնեակին մէջ որեւէ փոփոխութիւն չկատարուեցաւ:

Իր տրամադրութեան տակ ունենալով 11,740 կէտ, սերպ Նովաք Ճոքովիչ կը շարունակէ գրաւել առաջին դիրքը:

Սպանացի Ռաֆայէլ Նատալ, որ կը գրաւէ երկրորդ դիրքը, ունի 9850 կէտ:

Իսկ լաւագոյն եռեակը կ'ամբողջացնէ աստրիացի Տոմիսիք Թիւթ (9125 կէտ):

Հայկական արմատներով ռուս թենիսմէն՝ Կարէն Խաչանով, դիրք մը Նահանջելով, այժմ կը գրաւէ դասաւորման 18-րդ դիրքը:

ՌԱՄՈՍ ԵՒ ՌԷԱԼ ՄԱՏՐԻՏ
ԶԿՐՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԻԼ



Ռեալ Մատրիտի խմբապետ Սերճիօ Ռամոս եւ ակումբին ղեկավարութիւնը չկրցան իրարու հետ համաձայնութիւն գոյացնել նոր պայմանագրութեան գծով: Այս մասին յայտնեց հանրածանօթ՝ «Goal.com» կայքը:

Վերոնշեալ աղբիւրին համաձայն, արքայական ակումբը պատրաստ է միայն մէկ տարիով երկարածգել Ռամոսի պայմանագրութիւնը, սակայն 34 տարեկան ֆութպոլիստը կը պահանջէ երկու տարիով պայմանագրութեան երկարաձգում:

Երկու կողմերուն միջեւ նոր պայմանագրութեան գծով բանակցութիւնները այժմ դադրած են: Անոնք պիտի վերսկսին յունուար 2021-ին:

Նշենք, որ Սպանիոյ ֆութպոլի ազգային խումբի միջազգային յետսապահը Ռեալ Մատրիտի մաս կը կազմէ 2005-էն ի վեր:

«ԶԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝
ԵՌԻՎԵՆԹՈՒՄ-ՊԱՐՍԵԼՈՆԱ




Խմբակներու դրութեամբ տեղի ունեցող «Զեմփիք-Լիկ»-ի ֆութպոլի մրցաշարքին Բ. հանգըրուանի մրցումներուն ծիրին մէջ, այսօր՝ չորեքշաբթի, Է. խմբակին մէջ տեղի պիտի ունենայ բաւական զօրաւոր եւ տաք ճակատում մը, որուն ընթացքին Եուվէթուս պիտի հիւրընկալէ Պարսելոնան: Մրցումին ազդանշանը պիտի տրուի ժամը 22:00-ին՝ Պելլուքի ժամանակացոյցով:

Երկու կազմերն ալ իրենց կատարած առաջին մրցումին յաղթանակ արձանագրեցին:

Նոյն ժամուն, սակայն Ը. խմբակին մէջ, Լայփցիկ հիւրը պիտի ըլլայ Մանչեսթըր Եունայթեդին:

ԼԱԻՐՈՎ ԵՒ ՏԵՆՏԻԱՍ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԻ ԳՕՏԻՆ ՄԵՋ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԵԼՈՒՆ ՈՒՂՂՈՒՄԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԶԱՆՔԵՐԸ



Յունաստանի արտաքին գործոց նախարար Նիքոս Տենտիաս և Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով քննարկած են այն ջանքերը, զորս միջազգային ընտանիքը կը գործադրէ Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիին մէջ խաղաղութեան հասնելու համար:

«Արմենիքոն» կը հաղորդէ, որ այս մասին Աթենքի մէջ մամլոյ ասուլիսի ընթացքին յայտնած է Յունաստանի արտաքին գործոց նախարար Նիքոս Տենտիաս՝ ամփոփելով Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրովի հետ իր ունեցած քննարկման արդիւնքները:

«Մենք քննարկած ենք այն ջանքերը, զորս կը գործադրէ միջազգային ընտանիքը՝ տագնապի գոտիին մէջ խաղաղութեան հասնելու համար: Այդ ծիրին մէջ ես պարոն նախարարին ներկայացուցած եմ իմ՝ վերջերս Երեւան կատարած այցելութիւնս: Ես ընդգծած եմ կրակոցի դադրեցման հասնելու կարելութիւնը», ըսած է Յունաստանի արտաքին գործոց նախարարը:

Լաւրով իր կարգին ընդգծած է, որ քննարկումներուն ընթացքին խօսած է այն դերին մասին, որ Ռուսիան՝ իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ, կը գործադրէ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծումը խթանելու համար՝ սկսելով կրակոցի անյապաղ դադրեցումէն:

«Խօսած ենք նաեւ, թէ ի՞նչ քայլերու կը ձեռնարկենք այլ ուղղութիւններով յետխորհրդային աշխարհաքաղաքական տարածքին մէջ: Մենք շահագրգռուած ենք, որ այնտեղ գոյութիւն ունեցող բոլոր խնդիրները յաղթահարուին եւ լուծուին», նշած է Լաւրով:

ԵՏՄ-Ի ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԸ ՄՈՍԿՈՒՅՑԻՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ՝ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ ԹՈՒՐԲԻԱՆ ԿԱՆԳՆԵՅՆԵԼՈՒ

Եւրասիական տնտեսական միութեան (ԵՏՄ) հիմնարկի գործադիր տնօրէն Վլատիմիր Լեփիոխին, անդրադարձելով Լեռնային Ղարաբաղի տագնապի սրման, յայտնած է այն կարծիքը, որ թէ՛ Ղայաստանը, թէ՛ Ազրայէճանը Թուրքիոյ եւ Բրիտանիոյ մասնակցութեամբ շրջանային մեծ խաղի գործիքներն են, հետեւաբար Ռուսիան պէտք է յստակ գիտակցի այդ շրջանին մէջ իր շահերուն, որպէսզի կրաւորական դէտ չըլլայ: Այս մասին կը գրէ «Ի.Էյ.Տեյլի»-ն:

Լրագրողի այն նշումին, որ Ղարաբաղի Կովկասի մէջ կացութիւնը վերջին օրերուն կը զարգանայ ծայրայեղօրէն անցանկալի ուղղութեամբ. Թուրքիան կ'ուժեղացնէ շրջանին մէջ իր ազդեցութիւնը, Ռուսիոյ մէջ արդեօ՞ք կը գիտակցինք իրադարձութիւններու նման դասաւորումին հաւանական հետեւանքներուն, փորձագէտը նշած է, որ երկու երկիրներն ալ՝ Ղայաստանը եւ Ազրայէճանը բնաւ մանրակրկիտ նախապատրաստուած արկածախնդրութեան հիմնական նախաձեռնողները չեն, ընդհակառակն՝ այդ արկածախնդրութեան գործիքներն ու զոհերն են:

«Իրերը պէտք է կոչել իրենց անուններով. փաստացիօրէն Թուրքիան պատերազմ սկսած է Ռուսիոյ դէմ մեզի համար ռազմավարական կարելորութիւն ունեցող շրջանին մէջ: Սկսած է Ազրայէճանի եւ արաբ ահաբեկիչներու ձեռքով, իսկ Ռուսիոյ մէջ այդ փաստը իբրեւ թէ չեն նկատեր: Սակայն խուսափիլ Թուրքիոյ հետ յարաբերութիւնները յստակացնելէ, այս անգամ պիտի չյաջողի, ասիկա այդ դէպքը չէ: Թրքական լոյկիներու արգելքը եւ առողջապահական քայլերը այն գործելաոճը չեն, որ կրնան սթափեցնել յանդուգն սադրիչը», կը կարծէ Լեփիոխին՝ աւելցնելով, որ Ռուսիան շրջանին մէջ պէտք է պաշտպանէ Ղայաստանը՝ իբրեւ իր ռազմավարական դաշնակից, ինչպէս նաեւ Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը, որ բախած է ցեղասպանութեան սպառնալիքին: Սակայն կարելորագոյնը՝ Ռուսիան պէտք է պաշտպանէ նախ եւ առաջ իր ազգային շահերը:

«Եթէ Ռուսիան կը պաշտպանէ իր շահերը հեռուոր սահմաններու վրայ, օրինակ՝ Սուրիոյ մէջ, ապա ինչո՞ւ մենք պէտք չէ պաշտպանենք մեր շահերը մօտիկ սահմաններուն վրայ՝ ինքնին Ղարաբաղի մէջ: Առաւել եւս, որ այստեղ բացայայտ է տեղւոյն բնակչութեան դէմ զինուորական գործողութիւններուն մէջ ահաբեկչական խմբաւորումներու մասնակցութիւնը», կը նշէ մասնագէտը՝ աւելցնելով, որ Լեռնային Ղարաբաղի կացութեան պարագային ռուսական ղեկավարութիւնը չունի Ղարաբաղի Կովկասի մէջ գերակայութեան հաստատման վերաբերեալ թրքական աճող փառասիրութիւնը կանգնեցնելու այլընտրանքը:

«Ռուսիան բնաւ կարիքը չունի, որ օսմանեան վարկածը տեղափոխուի Վրաստան, Աբխազիա, Դիւսիսային Կովկաս, Կեդրոնական Ասիոյ երկիրներ եւ Վոլկայի մարզ», եզրակացած է Լեփիոխին:

ՔԱՆԱՏԱՆ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԵՐՈՒՆ ԿՈՉ ՈՒՂՂԵ՛ ԶՄԻՋԱՄՏԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱՊԻՆ

Քանատան դարձեալ արտաքին կողմերուն կոչ կ'ուղղէ՝ չմիջամտելու Լեռնային Ղարաբաղի տագնապին: «Արմենիքոն»-ի հաղորդումով՝ այս մասին «Թուիթըր»-ի վրայ գրած է Զանատայի արտաքին գործոց նախարար Ֆրանսուա-Ֆիլիփ Շամփայն:

Ան նախ տեղեկացուցած է, որ խօսած է Ղայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեանի հետ՝ նշելով նաեւ Միացեալ Նահանգներու միջնորդութեամբ անգամ մը եւս հրադարձարի համաձայնութեան մասին:

«Մենք կը շարունակենք արտաքին



կողմերուն կոչ ուղղել՝ չմիջամտելու տագնապին եւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահի կողմէն ստուգման **մեքանիզմներ** ստեղծելու», նշած է Շամփայն:

«ՅՈՅՍ ՈՒՆԻՆՔ, ՈՐ ԱՆԳԱՐԱՆ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ Ս. ՍՈՖԻԱՅԻ ՀԱՐՅՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Կ'ԸՍԷ ԼԱԻՐՈՎ

Անգարան պէտք է կատարէ իր ստանձնած պարտականութիւնները, որոնք առնչուած են Պոլսոյ մէջ Ս. Սոֆիա տաճարի՝ իբրեւ ԵՈՒԼԵՍԶՕ-ի Յամաշխարհային Ժառանգութեան վայր կարգաւիճակին: Այս մասին յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով՝ Աթենքի լրատուական գործակալութեան տուած հարցազրոյցին մէջ:

«Կը հիմնուիք այն բանի վրայ, որ թրքական կողմը, ինչպէս մեզի բազմիցս վստահեցուցած է, պիտի առաջնորդուի փոխադարձ յարգանքի սկզբունքներով, պատշաճ կերպով պիտի վերաբերի ուղղափառ հաստատեցեալներու զգացումներուն եւ պիտի կատարէ ստանձնած պարտականութիւնները՝ վայրի կարգաւիճակին առնչուած բոլոր կանոններն ու պայմանները պահպանելու ուղղութեամբ, պիտի ապահովէ ատոր լիակատար անվտանգութիւնը եւ հասանելիութիւնը զբօսաշրջիկներու եւ ուխտագնացներու համար», նշած է Լաւրով:

Անոր համաձայն, տաճարի վիճակին գնահատականը կ'որոշէ ԵՈՒԼԵՍԶՕ-ի համաշխարհային ժառանգութեան կեդրոնի փորձագէտներու հսկողութեան առաքելութիւնը:

«Յոյս ունիմք, որ 5-9 հոկտեմբերին



կատարուած ստուգումներու արդիւնքներուն հիման վրայ պիտի ներկայացուին յանձնախումբին եզրակացութիւնները, ներառեալ թրքական կողմէն իրականացուող վերականգնողական աշխատանքներու որակին վերաբերեալ փորձագիտական եզրակացութիւնը, ինչպէս նաեւ հաւատքի բոլոր ներկայացուցիչներու անխոչընդոտ հասանելիութիւնը դէպի Ս. Սոֆիայի տաճար», աւելցուցած է Լաւրով:

Կը հաղորդուի, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան մտադիր է 30 հոկտեմբերին առաջին **նամազը** կատարել Պոլսոյ Ս. Փրկիչ Եկեղեցւոյ մէջ՝ այդպիսով քրիստոնէական յաւելեալ յուշարձան մը պաշտօնապէս մզկիթի վերածելով: Յայտնի խճանկարները եւ սուրբ գրութիւնները պիտի ծածկուին վարագոյրով, ինչպէս տեղի ունեցաւ Ս. Սոֆիայի պարագային:

ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐ ԿՐ ԶՕՐԱԿՅԻՆ ԱՐՑԱԽԻՆ

ՓԵԼՈՍԻ

Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան նախագահ Նենսի Փելոսի Լեռնային Ղարաբաղի մէջ մարտական գործողութիւններու շուտափոյթ դադրեցման կեդրոնական վերականգնման յոյս յայտնած է: Ան նաեւ նշած է տագնապին մէջ այլ պետութիւններու չմիջամտելու կարելորութիւնը եւ տագնապի ծաւալներու ընդլայնման անթոյլատրելիութիւնը:

Բացի ատկէ, Փելոսի վստահութիւն յայտնած է, որ մօտ օրէն ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ծիրին մէջ պիտի վերսկսին դարաբաղեան տագնապին վերաբերեալ բանակցութիւնները:

ԷՇՈՒ

Միացեալ Նահանգներու ընկերեսական Աննա Էշու միացած է իր գործընկերներուն եւ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփի վարչակազմին կոչ ուղղած է՝ Մակնիթսքի պատժամիջոցներ կիրարկելու ազրայէճանցի այն պաշտօնատարներուն դէմ, որոնք պատասխանատուութիւն կը կրեն Արցախի ժողովուրդին վրայ Ազրայէճանի շարունակական յարձակումին համար: Այս մասին հաղորդեց Միացեալ Նահանգներու Ղայ



դատի յանձնախումբը:

«Արցախի Յանրապետութեան վրայ Ազրայէճանի հրահրուած յարձակումը զուգորդուած է բնակավայրերու շարունակական հրթիռակոծումով եւ տարանջատող զինամթերքի կիրարկումով, որոնք կը մեծցնեն քաղաքային անձերու շրջանակին մէջ զոհերու կարելիութիւնը: Այս մարտավարութիւնը կը խախտէ մարդու իրաւունքները, եւ Ազրայէճանի պաշտօնական ղեմքերը պէտք է պատասխանատուութեան եւթարկուին Արցախի խաղաղ բնակիչներուն դէմ ձեռնարկուած գործողութիւններուն համար», նշած է Աննա Էշու:

Զոնկրեսականը նշած է, որ մարդու իրաւունքներու պաշտպանութեան վերաբերեալ «Մակնիթսքիի օրէնք»-ը Միացեալ Նահանգներու նախագահը կը լիազօրէ պատժամիջոցներ հաստատելու մարդու իրաւունքները ոտնահարողներուն դէմ:

«Ես կը միանամ Ներկայացուցիչներու տան իմ գործընկերներու նամակին՝ ուղղուած արտաքին գործոց նախարար Մայք Փոմփեյնի, որով կոչ կ'ուղղուի Թրամփի վարչակազմին պատժամիջոցներ հաստատելու հրէշաւոր յարձակումներուն մեղսակից ազրայէճանցի պաշտօնեաներուն դէմ», գրած է Էշու:

ՇԻՃ «ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՊԷՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՃՆՇՈՒՄ ԳՈՐԾԱԴՐԵԼ ԱԼԻԵԻ ԵՒ ԷՐՏՈՂԱՆԻ ՎՐԱՅ, ՈՐՊԷՍԶԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՄԵՋ ՎԵՐՋ ՏԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ»

Միացեալ Նահանգները պէտք է շարունակեն ճնշում գործադրել Ալիեի եւ Էրտողանի վրայ, որպէսզի Լեռնային Ղարաբաղի մէջ վերջ դնեն պատերազմին: «Թուիթըր»-ի վրայ այս մասին գրած է Միացեալ Նահանգներու Զոնկրեսի անդամ Էտըմ Շիֆ:

«Ես խօսեցայ Ղայաստանի արտաքին գործոց նախարար Չոհրապ Մնացականեանի հետ Արցախի մէջ հրադարձարի ապահովման ջանքերուն, ինչպէս նաեւ Ազրայէճանի ու Թուրքիոյ շարունակական մահաբեր յարձակումին մասին: Միացեալ Նահանգներ պէտք է շարունակեն ճնշում գործադրել Ալիեի եւ Էրտողանի վրայ, որպէսզի վերջ տան այդ պատերազմին», գրած է քոնկրեսականը:



ՈՒՌՄ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ «ՀԱՐԱՄԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՄԵՋ ԹՈՒՐԲԻՈՅ ՔԻԹԸ ԿՏՐԵԼՈՒ»

Տումայի պաշտպանական հարցերով յանձնախումբի առաջին փոխնախագահ Ալեքսանտր Շերին մեկնաբանած է Լեռնային Ղարաբաղի տագնապին մէջ Թուրքիոյ ներգրաւուածութիւնը՝ նշելով, որ եթէ ռուսական կողմը այս առնչութեամբ այժմ պատշաճ քայլեր չձեռնարկէ, ապա ՕԹԱՆ-ը անյապաղ Կովկասի միջոցով Ռուսիոյ մէջ կացութեան սասանումի նոր փորձերու պիտի ձեռնարկէ: Այս մասին կը գրէ «Փոլիթէքսիքըր» կայքը:

Մեկնաբանելով Թուրքիոյ վերջերս ցուցաբերած վարքագիծը՝ Շերին նշած է, որ Անգարան պարզապէս կը փորձէ վերադարձնել Կովկասը, իսկ «Ռուսիան եւ ամբողջ աշխարհը այժմ կը զբաղին զայն հանդարտեցնելու քաղաքականութեամբ»:

«Մենք որեւէ տագնապի չմիջամտելու համար բազմաթիւ պատճառներ կը գտնենք: Կը մտածենք, թէ Էրտողան պիտի կատողի ու ետքը պիտի հանգըստանայ: Սակայն Թուրքիոյ՝ առանց պատշաճ պատասխանի մնացած որեւէ գործողութիւն կ'ամրապնդէ Էրտողանի վստահութիւնը այն առումով, թէ ան ուժեղագոյն եւ հզօրագոյն երկիրը ունի, որ իր բանակը Օսմանեան կայսրութեան երբեմնի կորսուած տարածքները կրնայ վերադարձնել: Փոքր քայլերով ան կը ստուգէ միջազգային հանրութեան արձագանքը իր գործողութիւններուն: Թուրքիոյ հետ բոլոր մեղմ յարաբերութիւնները ոչ թէ իբրեւ դիւանագիտական մշակոյթ, այլ թուրքական դրսեւորում կ'ընկալուին: Իսկ յետոյ շատ անելի վատ պիտի ըլլայ», նշած է Շերին:

Երեսփոխանը նաեւ յիշեցուցած է Ղայաստանի մէջ ռուսական ռազմակայանի մասին եւ զգուշացուցած, որ պատշաճ արձագանքի բացակայութեան պարագային շուտով Ազրայէճանի մէջ պիտի յայտնուի թրքական ռազմակայան, կարելի է ըսել՝ ՕԹԱՆ-ի ռազմակայան:

«ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԴԻՄՈՒՄԸ ՈՒՌՄԻՈՅ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՊԻՏԻ ԸՆԿՈՒՆՈՒԻ ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ, ԲՆԱԿԱՆԱՔԱՐ, ՔՆՆԱՐԿՈՒԻ»

Կ'ԸՍԷ ՉԱԹՈՒԼԻՆ

«Արցախի Յանրապետութեան նախագահ Արաիկ Յարութեանեանի դիմումը պիտի ընդունուի առ ի գիտութիւն եւ, բնականաբար, պիտի քննարկուի», «Ժողովուրդ» օրաթերթին հետ զրոյցի մը ընթացքին նման տեսակետ արտայայտած է Ռուսիոյ Տումայի երեսփոխան, ԱԴՅ-ի հարցերով յանձնախումբի առաջին փոխնախագահ Զոնկրեսիոյ Չաթուլին:

Չաթուլին օրաթերթին հետ զրոյցին ընթացքին յայտնած է, թէ Արցախ միջազգայնօրէն չճանչցուած պետութիւն է, հակառակ անոր որ կ'ընդգծէ, թէ ինք շատոնց ճանչցած է զայն: «Ի հարկէ, Ղայաստանի Յանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան մեր կողմէ ճանչցուած պետութեան, մեր դաշնակից երկրի ղեկավարն է, իսկ Արցախը միջազգայնօրէն չճանչցուած միաւոր է: Ծիծը Է՝ ես շատոնց ճանչցած եմ զայն, սակայն Ռուսիան, Ղայաստանը եւ այլ պետութիւններ զայն չեն ճանչցած: Եւ ատիկա, բնականաբար, խնդիրներ կը յառաջացնէ, որպէսզի ուղիղ պատասխան ըլլայ: Ի հարկէ, ատիկա պիտի վերլուծուի, սակայն այս պահուին յաւելեալ բան չեմ կրնար ըսել», աւելցուց ան: